ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻՑ

1—15 ՕԳՈՍՏՈՍԻ 1997 Թ.

№ 15 (101)

ԳԻՆԸ՝ 80 ԴՐԱՄ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հուլիսի 22-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում և վարչապետարանում ընդունելություններից հետո, Հայ առաքելական և Հույն ուղղափառ եկեղեցիների հոգևոր պետերն ու նրանց ուղեկցող շքախմբերի անդամները եղան հանրապետության գիտական կարևորագույն կենտրոնում՝ գիտությունների ազգային ակադեմիայում:

Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը ջերմորեն ողջունելով Բարթողիմեոս Ա. տիեզերական պատրիարքի այցելությունը Հայաստան և հատկապես գիտությունների ազգային ակադեմիա, նշեց, որ հայ և հույն ժողովուրդների բարեկամությունը դարերի խորքից է գալիս: Հույն մշակույթը միշտ էլ բարերար ազդեցություն է թողել հայ մշակույթի վրա: Մինչև Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծումը հունարենը եղել է հայ արքունիքի պաշտոնական լեզուն: Քրիստոնեությունը էլ ավելի սերտորեն է կապել մեզ միմյանց հետ: Այսօր, երբ հայ ժողովուրդը կրկին անկախություն է ձեռք բերել, մեր կապերը մի նոր բովանդակություն են ստացել:

Ապա Ֆադեյ Սարգսյանը հարգարժան հյուրերին ներկայացրեց ազգային ակադեմիայի գործունեության ուղղությունները երեք հիմնական՝ հումանիտար, բնական և ճշգրիտ գիտությունների բնագավառներում, պատմեց գործող տասնյակ գիտահետազոտական հաստատությունների և կենտրոնների մասին:

Տիեզերական պատրիարքը, արտահայտելով իր գոհունակությունը գիտության այդ տաճարում գտնվելու առթիվ, ասաց ,որ գիտությունը շատ օգտակար և զորավոր ուժ է, եթե այն կիրառվի միայն բարի նպատակներով: Գնահատելով գիտնականների նպաստը և ներդրումը հասարակության զարգացման գործում, Նորին սրբությունը մաղթեց նրանց նորանոր հաջողություններ:

Գարեգին Ա. վեհափառ հայրապետը, խիստ կարևորելով Բարթողիմեոս Ա. Տիեզերական պատրիարքի այս պատմական այցելությունը Հայաստան, որով մի նոր էջ է արձանագրվում մեր երկու ժողովուրդների պատմության մեջ, արժեվորեց մտավորականների պրպտողական լուրջ ու հետևողական աշխատանքը և նրանց դերը հասարակության զարգացման գործում:

ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ

Ժամանակակից կենսատեխնոլոգիան մեծ հնարավորություններ է ստեղծել կենսական կարևոր հիմնահարցերի՝ այդ թվում պարենի, վառելիքա-էներգետիկ համալիրի, գյուղատնտեսության և բժշկության կարևորագույն պրոբլեմների լուծման համար: Չնայած կենսատեխնոլոգիան հաստատվել է որպես գիտատեխնիկական առաջընթացի կարևորագույն ուղղություններից մեկը, սակայն այդ բնագավառում գոյություն ունեցող գիտաարտադրական կարողությունը հանրապետությունում օգտագործվում է անբավարար:

Կենսատեխնոլոգիայի նվաճումների արդյունավետ, արագ ներդրման, ինչպես նաև կենսատեխնոլոգիական նոր, հեռանկարային արտադրությունների կազմակերպման համար ԼՂՀ-ի արդյունաբերության և գյուղատնտեսության նախարարության հետ գիտաարտադրական համագործակցության զարգացման նպատակով, ՀՀ ԳԱԱ նախագահությունը օրերս կայացած նիստում որոշեց հավանություն տալ միկրոբիոլոգիայի ինստիտուտի և մանրէների ավանդադրման հանրապետական կենտրոնի առաջարկություններին՝ ԼՂՀ-ում կենսատեխնոլոգիական նոր արտադրությունների կազմակերպման և այդ բնագավառում անհրաժեշտ գիտաարտադրական համագործակցություն հաստատելուն: Որոշվեց քննարկել և դրականորեն լուծել նոր կենսատեխնոլոգիական արտադրությունների կազմակերպման միասնական ընդհանրական կորպորացիա:

Հանձնարարվեց միկրոբիոլոգիայի ինստիտուտին և մանրէների ավանդադրման հանրապետական կենտրոնին՝ մշակել և մեկ ամսվա ընթացքում ներկայացնել նոր կենսատեխնոլոգիական արտադրությունների կազմակերպման համալիր նպատակային ծրագիր՝ կարևորագույն ուշադրություն ընդգծելով տեղական հումքի օգտագործմամբ պարենամթերքների ստացմանը:

Դիմելով Լևոն Օրբելուն

Հուլիսի 7-ին լրացավ Լևոն Աբգարի Օրբելու ծննդյան 115 տարին: Այդ երևելի գիտնականի սիրագործությունը ոչ միայն փայլուն հետազոտություններն են և խոշոր տեսական ընդհանրացումները, որոնք նա տվել է ֆիզիոլոգիական գիտությանը, այլ նաև գիտնականի ու մտածողի այն հանճարը, որը վերաբերում է գիտության կազմակերպմանը, բազմաթիվ հետազոտողների ուժերի միավորմանը՝ ժամանակակից գիտության արմատական խնդիրների լուծման ուղղությամբ, այն խնդիրների լուծմանը, որոնք պահանջում են բազմաթիվ ստեղծագործ մտքերի միավորում:

Լ. Ա. Օրբելու ստեղծագործական ուղին առանձնանում է զարմանալի նպատակադրվածությամբ, հետևողականությամբ, որոնք բերել են համաշխարհային ճանաչություն ունեցող հայտնագործությունների: Նրա արտահայտած մտքերն ու գիտական տեսությունները հիմք են հանդիսացել նոր հետազոտությունների համար: Նրա աշխատությունները այսօր էլ կենսունակ են: Լ. Ա. Օրբելին խոշորագույն նորարար էր: Նա արմատապես վերակառուցեց մեր պատկերացումները ֆիզիոլոգիայի բազմաթիվ բնագավառների մասին:

Եթե հարց տրվի, թե ի՞նչ նոր խոսք է կապված Լևոն Օրբելու անվան հետ, ի՞նչ ենք մենք իմացել հենց նրանից, կամ ընդհակառակը, ինչի՞ մասին մենք չէինք իմանա, ինչի՞ց մենք կզրկվեինք, եթե Լ. Ա. Օրբելին իրեն նվիրեր այլ մասնագիտության, ապա պարզ կդառնա, թե ինչքան աղքատ կլիներ ուղեղի ժամանակակից ֆիզիոլոգիան առանց այդ կրքոտ և միշտ պրպտող գիտնականի հայտնագործությունների, տեսական ընդհանրացումների ու հարստության, որին հասնելու համար էլ գոյություն ունի ճշմարիտ գիտությունը:

Պատասխանելով այդ հարցին, անհրաժեշտ է ընդգծել, որ կենտրոնական պրոբլեմը, որը կլանել է Լ. Ա. Օրբելու հետազոտական միտքը, եղել է կենդանի օրգանիզմի կոորդինացիայի պրոբլեմը: Ըստ էության, այդ պրոբլեմը ընդգրկել է բոլոր այն բազմաթիվ հարցերը, որոնցով նա զբաղվել է իր կյանքի տարբեր տարիներին: Հետազոտվե՞լ է, արդյոք, կարդինալ հարցը սնուցողական նյարդավորման, սիմպաթիկ նյարդային համակարգի հարմարողական-սնուցողական դերի մասին, ուսումնասիրվե՞լ են, արդյոք, մարդու և կենդանիների պայմանական-ռեֆլեկտոր գործունեության մեխանիզմները, կառուցվե՞լ է, արդյոք, տեսություն ուղեղիկի հիմնական ֆունկցիաների մասին, դիտարկվե՞լ են, արդյոք, վերլուծիչների փոխներգործության սկզբունքները՝ բոլոր այս աշխատանքներում հիմնական սկզբունքը եղել է կոորդինացիան, այն մեխանիզմների ուսումնասիրությունները, որոնցով բնորոշվում է ուղեղի աշխատանքի համաձայնեցվածությունը, նրա տարբեր բաժինների փոխկապակցվածությունը: Մեթոդական մոտեցումները բոլոր նշված հետազոտությունների համար որոշվում է պատմական սկզբունքով: Ուստի Լ. Ա. Օրբելու առաջնային և անգնահատելի ծառայությունը համաշխարհային մտքի առջև հանդիսանում է ֆիզիոլոգիական գիտության մեջ նոր առաջադիմական բընագավառի՝ էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ստեղծումը: Պրոբլեմի նկատմամբ տիրապետելով լայն կենսաբանական մոտեցումների և լինելով կենսաբանության բնագավառում պատմական մեթոդի հետևողդ, Լ. Ա. Օրբելին իր ստեղծագործական ամբողջ կյանքի ընթացքում ֆիզիոլոգիական գործընթացների ամենատարբեր հարցերի մշակման ժամանակ մշտապես իրագործել է էվոլյուցիոն մոտեցման ընկրզբունքը: Լ. Ա. Օրբելու ձեռքում զարգացման տեսությունը դառնում է ֆիզիոլոգիական երևույթների ուսումնասիրության հիմնական մեթոդներից մեկը: Ծնորհիվ դրա, բացահայտվում են օրգանիզմում ֆունկցիոնալ հարաբերությունների առաջացման ու ձևավորման սկզբունքային կողմերը:

Լ. Ա. Օրբելին մարդկանց նկատմամբ եղել է զարմանալի պարզ, բարյացակամ, ուշադիր, անկրկնելի բարությամբ ու գթասրտությամբ օժտված անձնավորություն:

Ինձ համար ճակատագրական են եղել հանդիպումները Լևոն Օրբելու հետ, նրա դասախոսությունների ունկնդրումը՝ Լենինգրադի համալսարանում: Օրբելու կյանքի և ստեղծագործությունների պատմությունը նրա դպրոցի, նրա աշակերտների պատմությունն է: Մեր ինստիտուտի ճակատագրի, հայկական ֆիզիոլոգիայի համար ես որպես նվեր եմ ընկալում այն փաստը, որ նրա խոշորագույն աշակերտներից երկուսը՝ Ա. Մ. Ալեքսանյանն ու Ա. Ի. Քարամյանը, երկու հոյակապ նյարդաֆիզիոլոգներ, բազում տարիների ընթացքում, նրա խորհրդով աշխատել են Հայաստանում, կատարելով հսկայական ներդրում մեր հանրապետության ֆիզիոլոգիական մտքի զարգացման, նրա գիտական ներուժում ինտելեկտուալ պաշարի ստեղծման գործում: Այդ անունները երբեք չպետք է մոռացվեն: Նրանք միշտ կանգնած են Օրբելու կողքին: Նրանց մասին առաջին հերթին պետք է իմանան և հիշեն հանրապետության ֆիզիոլոգների գալիք սերունդները, որոնց կհանձնվի դեղը:

Օրբելին եղել է ոչ սովորական անձնավորություն՝ ո՛չ միայն որպես ստեղծագործող, այլ նաև իր առանձնահատուկ անձնական հատկություններով: Օատերը, ովքեր գիտեին նրան, նրա նկատմամբ տածել են ոչ միայն խորը հարգանք, այլ նաև իսկական սեր, զարմանքի ու հիացմունքի զգացումներ, երբ նրա կողքին էին և երկար տարիներ անց, երբ արդեն նա չկա:

Հայաստանում վաղուց արդեն ստեղծվել է ամբողջակազմ հուշահամալիր Օրբելի եղբայրների, նրանց հոյակապ ընտանիքի մասին և հույս կա, որ մոտ ապագայում կլինի նաև մեկ էական լրացում՝ կապված ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը ակադեմիայի առաջին պրեզիդենտ, խոշորագույն արևելագետ Հովսեփ Օրբելու անվամբ կոչելու հետ: Այդպիսին են ծրագրերը:

Իսկ այսօր մենք՝ Լ. Ա. Օրբելու տաճարի պահապանները, մեծ երախտագիտությամբ նորից ու նորից դիմում ենք Լ. Ա. Օրբելու գեղեցիկ կյանքի մեծ ուղուն, նրա գիտական սխրանքին:

Վ. ՖԱՆԱՐՋՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս

Էություն և գոյակերպ

Եթե հետազոտող մի իմաստասերի մասին ասվի, որ նա վերջին տասը տարիների ընթացքում գրել-հրապարակել է տասնութ գիտական աշխատություն, այդ թվում երեք մենագրություն գիտական ու ազգային-քաղաքական հրատապ թեմաներով, մեկ դրպրոցական դասագիրք, ապա, իրոք ոչ մեկը չի կասկածի, որ խոսքը ստեղծագործական ակտիվության բարձրակետին գտնվող, երիտասարդական ավյունով ու հոգևոր կենսավիշով ապրեցուն մի գիտնականի մասին է: Այս դեպքում դա հենց այդպես էլ կա, քանի որ խոսքը ՀՀ ազգային ակադեմիայի իսկական անդամ Համլետ Ամբակումի Գևորգյանի մասին է, որի 70-ամյակը այս օրերին նշվում է հանրապետության գիտական շրջաններում:

Գիտական բացառիկ ազնվության ու սկզբունքայնության, ինքնապահանջկոտության ու համեստության աստղերի տակ է անցնում ակադեմիկոս Համլետ Գևորգյանի ստեղծագործական ուղին: Ինքը չի ջանում այդպիսին լինել: Դա բնությունից տրված նրա կենսակերպն է, նրա էությունը:

Երբ ժամանակներ հետո գիտության ու մշակույթի մասնագետները պարզեն, թե 20-րդ դարի երկրորդ կեսի հայոց իմաստասիրական միտքը ո՞ր գիտնականների հոգևոր ջանքերով է ձևավորվել, ապա, անկասկած, առաջինների թվում կհնչեցվի Համլետ Գևորգյանի անունը: Իսկ մեզ՝ նրա սերնդակից իմաստասերների համար դա ապրած և դեռ ապրվող իրողություն է: Այդ նա է դեռ հիսնական թվականներին հանրապետության ԳԱ փիլիսոփայության ու իրավունքի սեկտորում հիմնել իմացաբանական ու մեթոդաբանական հետազոտողների այն խումբը, որին իր ղեկավարի շնորհիվ հաջողվել է խուսափել գաղափարախոսական հարկադրանքներից, այդ բնագավառում հասնել մնայուն արդյունքների: Տասնյակ հայցողների ու ասպիրանտների գիտական ղեկավարն է նա եղել, տասնյակ աշխատությունների խմբագիրն ու գրախոսը, նրանց հեղինակների գիտական խորհրդատուն: Մի խոսքով, նա մեկն է եղել այն գիտնականներից, որոնք ձևավորել են այն մթնոլորտն ու միջավայրը, որտեղ ընթացել է 20-րդ դարի երկրորդ կեսի իմաստասիրական միտքը Հայաստանում:

Այս պնդումը հաստատող մի փաստ միայն. Հայկական Հանրագիտարանի իմաստասիրական հոդվածներից 99-ը հեղինակել է Համլետ Գևորգյանը, իսկ գրեթե մնացած բոլորի համար եղել է կա՛մ գիտական խորհրդատու, կա՛մ խմբագիր:

Արդեն իսկ հիսուն-վաթսունական թվականներին լույս տեսած նրա «Վերացարկման դերը գիտական իմացության մեջ» (1957 թ.), «Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ» (1959 թ.), «Հավանական և հավաստի գիտելիք» մենագրություններում քննարկվող փիլիսոփայական հարցերը նրրին վարպետությամբ դուրս էին բերվում պետական գաղափարախոսական ուսմունքի՝ դիալեկտիկական մատերիալիզմի այն շրջանակներից, որ աչալուրջ հսկում էին «արքունիքին ընթեր» իմաստասերները: Դիալեկտիկական մատերիալիզմի ներքին ծավալների ու տարածությունների՝ վերջինիս իսկ համար օգտակար այդ ընդլայնումը կատարվում էր, մի կողմից, ժամանակակից իմաստասիրության հարցերը դասական փիլիսոփայության հենքի վրա իմաստավորելու և մյուս կողմից՝ նույն հարցերի նկատմամբ ոչ ավանդական մոտեցումների կիրառման միջոցով: Այդ տեսակետից ուղենիշային էին Համլետ Գևորգյանի ղեկավարությամբ ու խմբագրությամբ 1969, 1971, 1974 թթ. հրապարակված «Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» ժողովածուները, որոնց քննության գլխավոր խնդիրը գիտական գիտելիքի իմացաբանական ու տրամաբանական բնութագրերի փոխհարաբերությունն էր:

Գիտելիքի ներգիտական, այդ թվում և տրամաբանական, բնութագրերի և նրանց իմացաբանական արժանիքների կապի մասին գաղափարը թարմ ու արգասաբեր էր մեծ իմաստով: Այն համահունչ էր իր իսկ գիտական իմացության զարգացման ներքին օրինաչափություններին և գիտական գիտելիքների փիլիսոփայական ու մեթոդաբանական վերլուծության բնագավառում զբաղում էր ինչպես բովանդակազուրկ «տրամաբանական ձևվամոլությունը», այնպես էլ անպտուղ իմաստախոսության կնիքն իր վրա կրող մոտեցումները: Ընտրված ուղղության հունի մեջ 70-ական թվականների վերջերից ուսումնասիրվեցին պատմականորեն մշակված այն ներգիտական միջոցները, որոնք տրամաբանական միջոցների հետ մեկտեղ ապահովում են գիտելիքի գիտականությունը և, հետևապես, նրանց հիմնական իմացաբանական որակները՝ ճշմարտությունը, օբյեկտիվությունը, հավաստիությունը: Գիտության փիլիսոփայության ու մեթոդաբանության ժամանակակից մոտեցումների քննական վերլուծությունը, որոնց նվիրված էին Համլետ Գևորգյանի «Գիտելիքի ժամանակակից տեսության ակնարկը» (1978 թ.) և «Գիտության պատմական մեթոդաբանական ակնարկ» (1987 թ.) աշխատու-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Կլոր սեղան, բանավեճ, մտքերի փոխանակում

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի ակադեմիական մասնաճյուղը իր հիմնադրման սկզբից որդեգրել է հավաքների, կլոր սեղանի պրակտիկան, որն առաջիկայում նույնպես կշարունակվի: Աշխատանքի այս ոճը հնարավորություն է տալիս կարծիքներ փոխանակել, բանավիճել: Իսկ թեմաները գիտության, կրթության, մշակույթի և սոցիալական խնդիրներին են վերաբերում:

Այս առումով հետաքրքիր էր «Կինը և գիտությունը» միջոցառումը, որի ընթացքում լսվեցին զեկույցներ՝ արևելագիտության, տընտեսագիտության, կենսաքիմիայի, ՀՀ ԳԱԱ համակարգում ընդգրկված կին-մասնագետների, համակարգի երիտասարդ աշխատակցուհիների ներկա սոցիալական վիճակի, նրանց հուզող հարցերի և դրանց բարելավման միջոցների մասին:

Միջազգային կապերի առումով Հայաստանը, անկախության պայմաններում, ներկայանում է բոլորովին նոր նկարագրով, որն իր արտացոլումն է գտնում նաև հասարակական կյանքում, մշակութային օջախներում: Արևելյան ազդակը պահանջում է գրագետ մոտեցում և արևելագետների ակտիվ հասարակական մոտեցումներ:

Այսպես՝ քրիստոնյա Հայաստանում վերջերս շահարկվում է բազմակնության թեման, որը հասարակական ինստիտուտ է՝ մահմեդական աշխարհին հատուկ, այն էլ հիմնականում ոչ նորագույն շրջանին: Այս թեմայի պրոպագանդման հարցում իր ոչ գրագետ և անհարիր ծառայությունն է մատուցում Հայկական հեռուստատեսության «Հայ տուն» ծրագիրը, այն դեպքում, երբ հայ ընտանիքներն իրենց ընտրությունը վաղուց կատարել են և նոր «քվեարկության» կարիք չկա՝ ընտանիքի միակ մոր և տնտեսուհու քանակը ավելացնելու նպատակով:

Կ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՀՐԱՏԱՊ

Բռնապե՛տ, հեռացի՛ր...

«Ամերիկայի ձայնի» հաղորդման համաձայն, «նախկին ԿԳԲ-ի բարձրաստիճան գործակալ, խոշոր կաշառակեր, բռնապետ Հեյդար Ալիևը» պաշտոնական այցով ժամանել է ԱՄՆ՝ բարյացկամ Բիլ Քլինթոնին կաշառելու համար:

Կհաջողվի՞, արդյոք, այդ բազմադեմ ու քաղաքականության մեջ ամոթը կորցրած ազերի տոհմապետին կաշառել աշխարհի ամենահարուստ և ամենազորեղ երկրի նախագահին, ցույց կտա ժամանակը: Իսկ ահա հուլիսի 30-ին ԱՄՆ-ի Հայ դատի վարչության կոչով ամբողջ օրը Կոնգրեսի դիմաց բազմամարդ ցույց տեղի ունեցավ՝ «ի պաշտպանություն Արցախի, Հայաստանի և ամերիկյան արժեքների»: Ցուցարարները վանկարկում էին.

— Բռնապե՛տ, հեռացի՛ր...

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ,

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԿՏՐՎԱԾ

Մաթեմատիկայի ինստիտուտում— մաթեմատիկական անալիզ
Բյուրականի աստղադիտարանում— աստղաֆիզիկա
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում— հաշվողական տեխնիկայի և մաթեմատիկական մեթոդների կիրառությունը գիտական հետազոտություններում
Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում— պինդ մարմնի ֆիզիկա
Մեխանիկայի ինստիտուտում— դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա
Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում— պինդ մարմնի ֆիզիկա
Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում— լազերային ֆիզիկա
«Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնում— լազերային ֆիզիկա
Երկրաբանական գիտությունների ինստիտուտում— օգտակար հանածոների երկրաբանություն, որոնում և հետազոտում, մետաղագոյացում
Երկրաֆիզիկայի և իմպուլսային սեյսմաբանության ինստիտուտում— երկրաֆիզիկա
Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում— կենսաօրգանական քիմիա
Օրգանական քիմիայի ինստիտուտում— օրգանական քիմիա
Կենսաքիմիայի ինստիտուտում— կենսաքիմիա (նեյրոքիմիա)
Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում— քիմիական կինետիկա
Բուսաբանության ինստիտուտում— անատոմագիտություն
Միկրոբիոլոգիայի ինստիտուտում— միկրոբիոլոգիա
Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում— մոլեկուլային կենսաբանություն
Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտում— կենսատեխնոլոգիա(հիդրոպոնիկա)
Էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնում— հաշվողական տեխնիկայի և մաթեմատիկական մեթոդների կիրառությունը բնապահպան խնդիրների լուծման մեջ
Պատմության ինստիտուտում— հայոց պատմություն (նոր շրջան)
Արևելագիտության ինստիտուտում— Թուրքիայի նորագույն պատմություն
Հնագիտության և ազգագրության ինստիտուտում— հնագիտություն
Տնտեսագիտության ինստիտուտում— տնտեսության և նրա ճյուղերի էկոնոմիկա, կազմակերպում և կառավարում, տնտեսագիտա-մաթեմատիկական մեթոդներ
Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում— սահմանադրական իրավունք
Լեզվի ինստիտուտում— հայոց լեզվի պատմություն
Գրականության ինստիտուտում— հայ հին և միջնադարյան գրականություն
Արվեստի ինստիտուտում— ճարտարապետության պատմություն
Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնում— սոցիոլոգիայի տեսություն և պատմություն

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՉԿՏՐՎԱԾ

Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում— հաշվողական տեխնիկայի և մաթեմատիկական մեթոդների կիրառությունը գիտական հետազոտություններում
Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում— պինդ մարմնի ֆիզիկա
Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում— տեսական ֆիզիկա, ավտոմատացման համակարգեր
Երկրաբանական գիտությունների ինստիտուտում— ապարագիտություն, հրաբխագիտություն, լիթոլոգիա
Երկրաֆիզիկայի և իմպուլսային սեյսմաբանության ինստիտուտում— երկրաֆիզիկա
Կենսաքիմիայի ինստիտուտում— կենսաքիմիա (էկոլոգիա)
Կենդանաբանության ինստիտուտում— կենդանաբանություն
Ֆիզիոլոգիայի ինստիտուտում— մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա
Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտում— էկոլոգիա
Կենսաֆիզիկայի կենտրոնում— կենսաֆիզիկա
Արևելագիտության ինստիտուտում— Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմություն
Հնագիտության և ազգագրության ինստիտուտում— ազգագրություն
Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում— սահմանադրական իրավունք
Ցեղասպանության թանգարան-ինստիտուտում— հայոց պատմություն (նոր շրջան)
Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնում— սոցիոլոգիայի տեսություն և պատմություն

Դիմումներն ընդունվում են մինչև օգոստոսի 16-ը, ընդունելության քննությունները՝ օգոստոսի 20-ից:

Հասցեն՝ Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24, 7-րդ սենյակ:

Հայոց միջնադարը

Ինչպես արդեն հաղորդել ենք, տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի «Հայոց միջնադարը» խորագրով գիտական նստաշրջանը՝ նվիրված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 110-ամյակին։ Ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆեդել ՍԱՐԳՍՅԱՆԸ բարձր գնահատեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գիտական, գիտակազմակերպչական ներդրումները, որոնք արտահայտվել են Օրբելու գիտական բազմազան հետաքրքրությունները արտացոլող աշխատություններում և թե՛ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ստեղծման, նրա հետագա գործունեության ծավալման ու զարգացման գործում։ Ջերմորեն ողջունելով գիտական նստաշրջանը, նա հաջողություն ցանկացավ վերջինիս աշխատանքներին։

Ըստ ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Գագիկ ՍԱՐԳՍՅԱՆԻ ներածական խոսքի, հայ միջնադարյան մշակույթը հայ ժողովրդի մեծ ներդրումն է համաշխարհային քաղաքակրթության մեջ, նրա այցետոմսը մեծ մշակույթների կողքին։ Նա կարևորեց հայ միջնադարյան մշակույթի ինչպես հետագա ուսումնասիրությունը, այնպես էլ եռանդուն քարոզչությունը (պրոպագանդան)։

Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի այդ միտքը ցայտուն, կենդանի գծեր ստացավ պ.գ.դ. Կարեն ՑՈՒՋԱԲԱՇՅԱՆԻ խոսքում՝ նվիրված ակադեմիկոս Օրբելու գիտական և հասարակական գործունեությանը, որի ղեկավարությամբ նա աշխատել է երկար տարիներ։

Նստաշրջանը նպատակ ուներ հայ միջնադարյան մշակույթի բազմաշերտ ներկայացումը ինչպես գիտական, այնպես էլ քարոզչական առումով, ինչպես և այդ բնագավառներում այսօրվա գիտության իրավիճակի, այսպես ասած «գույքագրումը» և միջնադարագետ-մասնագետների պրոֆեսիոնալ մերձեցումը։

Նստաշրջանի «Պատմություն և աղբյուրագիտություն» մասնաճյուղում կարդացված զեկուցումները ներկայացնում էին հայագիտության տարբեր ուղղություններ։ Եկեղեցական-դավանաբանական հարցերի ուսումնասիրությանն էին նվիրված պատմ. գիտ. դոկտորներ Էդուարդ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ «Եկեղեցական ժողովների նյութերի աշխարհագրությունը», Վրեժ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ «571 թ. հայ-բյուզանդական դավանական միության հանգամանքները» և Ազատ ԲՈՋՈՅԱՆԻ «Հայոց կաթողիկոս» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո» զեկուցումները։ Վերջին զեկուցման մեջ մասնավորապես եզրակացվում էր, որ 11—12-րդ դարերում հայոց կաթողիկոսությունը փորձում էր գերծ պահել հայոց եկեղեցին աշխարհիկ առանձին իշխանությունների պարտադրանքից՝ ձեռք բերելով նոր կարգավիճակ։ Նախկին «կաթողիկոս հայոց մեծաց» տիտղոսը 12-րդ դարում փոխարինվում է «կաթողիկոս ամենայն հայոց» ձևակերպումով։

Գիտական նստաշրջանում ընթերցվեցին նաև վիմագրագիտական զեկուցումներ։ Պ.գ.դ. Գրիգոր ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ներկայացրեց Սյունիքի թագավորության ժամանակաշրջանին վերաբերող իր կողմից հայտնաբերված արժեքավոր վիմագիր արձանագրություններ, իսկ Մերուժան ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ՝ Հռոմում հայոց հյուրատան իր հավաքած հայերեն արձանագրությունները։ Պատմագիտական հարցերի քննությանն էր նվիրված պ.գ.թ. Պետրոս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «Երկու ուղղություն 9—11-րդ դարերի հայ պատմագիտության մեջ» զեկուցումը։

Երկրագործական և քոչվոր-անասնապահական մշակույթների հակամարտության դրսևորումների և քոչվորների ներհոսքի հետևանքների ուսումնասիրությանն էր նվիրված պ.գ.դ. Հայրապետ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ «Քոչվորները և Հայաստանը 11—15-րդ դարերում» զեկուցումը։ Ուշագրավ հետևությունների է հանգում պ.գ.դ. Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ՝ «Աշխարհացույցը և չորս Հայքերի խնդիրը» զեկուցման մեջ, ցույց տալով, որ «Աշխարհացույցի» բնագրում չորս Հայքերի հիշատակումը ձեռագրական հետագա հավելումների արդյունք է, և, ըստ այդմ, բնագիրը ստեղծվել է մինչև 6-րդ դարի վարչական բաժանումները։

Հայ մատենագրության ժամանակագրական խնդիրների լուծման նոր միջոցներ էին առաջադրված պ.գ.դ. Ռաֆիկ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ զեկուցման մեջ, որտեղ ներկայացվեց համակարգչային եղանակով ժամանակագրական համապատասխանությունների որոշման իր առաջարկած մեթոդը։

Երկար բանավեճերի ու տարբեր մեկնաբանությունների առարկա դարձած «Կարքեդոն» տերմինի ու նաև «Քաղքեդոն» տեղանվան շրջագծերի նոր օրինակներով պ.գ.դ. Պարույր ՄՈՒՐԱԴՅԱՆԸ «Կարքեդոն և Քաղկեդոն ընթերցումները» զեկուցման մեջ հանգում է այն եզրակացության, որ նշված տերմինը (Կարքեդոն, Կարթագեն) վաղ միջնադարյան որոշ աղբյուրներ զետեղում են Պարսկաստանում, ուստի Սեբեոսի մոտ և Աշուշա Բդեշխի կնիքի վրա Կարքեդովն է կոչված Սասանյան Իրանը։

Ուշագրավ էր «Ազգ և ազգային որոշիչներ» թեմայով բ.գ.դ. Արտաշես ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ զեկուցումը։ 17-րդ դարի Նախիջևանի հայ-կաթոլիկ թեմի առաջնորդ Օգոստինոս Բաջեցու ուղեգրության պարունակած տվյալների քննությանն ու ուղևորության հանգամանքների վերլուծությանն էր նվիրված բ.գ.դ. Արշակ ՄԱԴՈՅԱՆԻ զեկուցումը։

Նստաշրջանում առանձնակի հետաքրքրությամբ լսվեցին դրամագիտական բնույթի զեկուցումները։ Ուշագրավ հիմնավորում առաջարկվեց Արմինե ԶՈՒՐԱԲՅԱՆԻ կողմից «Հայ Բագրատունիների դրամների բացակայության առեղծվածը» զեկուցման մեջ։ Իսկ պ.գ.դ. Արամ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ զեկուցման մեջ, ըստ Դվինի նյութերի, բացահայտվեց 5—7-րդ դարերում Բյուզանդական դրամակշռային համակարգի առկայությունը Հայաստանում։ Պ.գ.դ. Իգիթ ԴԱՐԻԲՅԱՆՆ իր զեկուցման մեջ Հայաստանում և հարևան երկրներում տարածում գտած կավե ծխամորճները թվագրեց 14-րդ դարով։ Հետաքրքիր զուգահեռներ էին բացահայտված Անանիա Շիրակացու «Խրախճանակաց» երկի և միջնադարյան խնջույքի ընկալման մեջ, որոնց ուսումնասիրմանն էր նվիրված պ.գ.թ. Համլետ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ զեկուցումը։

Հռոմում գրված հայերեն ձեռագրերի հիշատակարանների և հարակից այլ սկզբնաղբյուրների հիման վրա հակամոնղոլական դաշինքի նպատակով 1238—40 թթ. Հռոմում կայացած հայ-վրացական պատվիրակության այցելությունը էր նվիրված պ.գ.թ. Պավլիկ ՁՈՐԱՆՅԱՆԻ զեկուցումը։

Եթե փորձենք «Բանասիրություն և արվեստագիտություն» մասնաճյուղի զեկուցումները դասակարգել ըստ պրոբլեմատիկայի, ապա կըստանանք հետևյալ պատկերը։

Պատմա-համեմատական պրոբլեմներին էին նվիրված երեք զեկուցում։ Ակադեմիկոս Էդուարդ ԶՐԲԱՇՅԱՆԻ զեկուցման մեջ («Հայկական մի առակի միջազգային արձագանքները»), համեմատական կարգով այրի կնոջ և չար իշխանի մասին հայկական միջնադարյան առակի փոփոխակներն են ներկայացվում Մարտին Լյութերի մոտ, գերմանական ռոմանտիկ պոետ Ծամիսսոյի մի բանաստեղծության մեջ և Հովհ. Թումանյանի երկերում, ուղղված նորաստեղծ վրացական պետության առաջնորդներին։ Բ.գ.դ. Զնարիկ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ-ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ զեկուցումը հայ միջնադարյան մի քանի ավանդապատումներում և Նարեկացու վարքում ցույց է տալիս Թովմայի՝ Տղայության պարականոն ավետարանից անդրադարձումներ։ Ծարտ. դ. Դավիթ ՋԵՐԹՄԵՋՅԱՆԻ զեկուցումը («Հայ-սիրիական առնչությունները ճարտարապետության մեջ և նրա զարգացման փուլերը») առաջին փորձն է տեղում կատարված հետազոտությունների հիմքի վրա հայ-սիրիական ճարտարապետական հարաբերությունների զարգացումն ընդլայնելու ժամանակագրական առումով ինչպես պատմական, այնպես էլ գեղարվեստական փոխառնչությունների տեսակետից։

Հետազոտական նոր խնդիրների առաջադրման առումով մենք կարող ենք մատնանշել լեզվի խնդիրներին նվիրված երեք զեկուցումները (բ.գ.դ. Լիանանա ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ «Արդի արևելյան ուղղագրության պատմական հիմքերը», բ.գ.դ. Լավրենտի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ «Գրաբարի բառարաններում չարձանագրված բառերի քննություն, ըստ 5-րդ դարի մատենագրության տվյալների», և բ.գ.թ. Սուսաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ «Բառերի այլաբանական արժեքը հայ միջնադարյան դարձվածաբանական միավորներում»)։ Առաջին զեկուցման մեջ խոսքը վերաբերում է հիմնականում դեռևս 10-րդ դարից սկսած՝ հայկական գրավոր հուշարձանների մեջ ըստ արտասանության փոփոխման՝ ուղղագրական փոփոխումներ մտցնելու պրակտիկային, որը գալիս է պատմական նյութերով հիմնավորելու ժամանակ առ ժամանակ լեզվի զարգացմանը համընթաց ուղղագրական համակարգը նորոգելու անհրաժեշտությունը։ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ քննում է և դասակարգում 5-րդ դարի մատենագրության մեջ կիրառվող հարյուրավոր բառեր, որոնք արձանագրված չեն մեր դասական բառարաններում։ Սուսաննա ԳՐԻԳՈՐՅԱՆԻ զեկուցումը կարող է սկիզբ լինել մատենագրության մեջ այլաբանության (ավելի ճշգրիտ լինելու համար՝ փոխաբերության և պատկերայնության) ուսումնասիրությանը, որը հետաքրքրական ներդրում կլինի մի շարք նշանավոր հետազոտողների՝ տեսականորեն և փորձնականորեն մշակված պատկերայնության բնագավառում։

Նույն կարգի զեկուցումներ կարելի է համարել արվեստի բնագավառում պ.գ.դ. Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆԻ («Հայ միջնադարյան երաժշտական գործիքները մանրանկարներում»), արվ. դ. Վիգեն ՂԱԶԱՐՅԱՆԻ («Միջավայրը Կիլիկյան մի քանի մանրանկարներում») և արվ. թ. Իրինա ԴՐԱՄԲՅԱՆԻ («Մարդու կերպարը Թորոս Ռոսլինի ստեղծագործություններում») զեկուցումները։

Վարկածային բնույթի էր բ.գ.թ. Արտաշես ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ զեկուցումը մեսրոպատեղծ գրատեսակների ու դրանց տարրերի համակցությունների ձևային մշակման մասին։ Զեկուցողը քայլ առ քայլ հետևելով Կորյունի «Վարքին» և հիմնվելով մատենական տառատեսակների ու ոճերի իր մեծ փորձի վրա, ձգտում է վերականգնել «մեսրոպաստեղծ» գրերը «աղյուսակ գրերի» միջոցով և դրանց տեսակների մշակումները գրիչ Հռոփանոսի օգնությամբ։

Բ.գ.դ. Պիոն ՀԱԿՈԲՅԱՆԸ («Հայկական էպոսի ինքնույն հետքերը Հայաստանում») Հառիճավանքի մի արձանագրության հիման վրա, որտեղ հիշատակվում են «Սասասար» և «Բաղդասար» անունները, եզրակացնում է, որ թերևս Զաքարյանների շրջանում Մեծ Հայքի հարավային գավառներից տարագրումների կամ եկած գուսանների շնորհիվ «Սասունցի Դավիթ» էպոսի այս անունները վեպի ազդեցությամբ վկայված են իբրև մարդկանց իրական անուններ, ուրեմն և հասուն միջնադարում վեպի մասին գաղափար են ունեցել նաև Արևելյան Հայաստանում։

Բ.գ.դ. Վարագ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ «Ծարակնոցի խմբագրությունները» և պ.գ.թ. Գրիգոր ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆԻ «Փավստոս Բուզանդի «Պատմության» ձեռագրական աշխատությունը» զեկուցումները նշանավոր այդ երկերը դիտարկում են շատ ավելի լայն ձեռագրագիտական ուսումնասիրության հիման վրա, որով ճշտվում կամ հերքվում են խոշորագույն հայագետների ենթադրելի կամ առաջադրվող բնագրագիտական շատ ողղումներ և ընթերցումներ, որոնք հստակեցնում են բնագրի հասկացումը։ Ծարտ.դ. Տիրան ՄԱՐՈՒԹՅԱՆՆ իր «Գառնիի բոլորակ տաճարի ճարտարապետության առանձնահատկությունները» զեկուցման մեջ առաջարկում է 7-րդ դարի տաճարի վերականգնման ավելի ներդաշնակ նախագիծ, քան Ստեփան ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ առաջարկածը։ Արվ.թ. Սեյրանուշ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ներկայացրեց Էջմիածնի Մայր տաճարի մատենադարանի Բարձր Հայքում (Սեպուհ լեռ) պատկերազարդված մի ձեռագիր, որը վերագրվում էր Գրիգոր Տաթևացուն։

Բանավեճ հարուցեց ակադեմիկոս Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ելույթը լիագումար նիստում («Հայաստանում 8—9-րդ դարերի շինարարական գործունեության մասին»), որտեղ պաշտպանվում է հայ ճարտարապետության նվիրյալ Թորամանյանի և ուրիշների տեսակետը՝ Հայաստանում արաբական տիրապետության շրջանում հայերի կառուցողական գործունեության լիակատար դադարի մասին։ Ճ. դ. Գ. ՇԱՀԽԱՏՅԱՆԸ պնդում էր, որ այդ շրջանում ևս իսպառ չի դադարել հայոց շինարարական գործունեությունը։

Նստաշրջանն անցավ աշխույժ հարցուպատասխանի և քննարկումների մթնոլորտում։ Այն ավարտվեց «Կյոր սեղանի» շուրջ կայացած եզրափակիչ նիստով։ Հանդես եկան նստաշրջանի երկու մասնաճյուղերի ղեկավարներ, պ.գ.դ. Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ և արվ.դ. Վ. ՂԱԶԱՐՅԱՆԸ՝ համապատասխան մասնաճյուղերում կատարված աշխատանքի մասին զեկույցներով։

Այնուհետև քննարկվեց «Հայագիտության գալիք օրը» թեման։ Բազմաթիվ առաջարկությունների մեջ իրենց տեղը գրավեցին Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի նշման նախապատրաստման և այդ կապակցությամբ «Հայոց եկեղեցու պատմություն» մեկհատորյակի ստեղծման խնդիրները։ Խոսք եղավ միացյալ ուժերով 5—18-րդ դդ. հայ հարստագույն մատենագրության պատմության ստեղծման անհրաժեշտության մասին և նշվեց, որ այդօրինակ ծավալուն ձեռնարկումները, որոնք խորհրդային շրջանում իրականանում էին կենտրոնացված ֆինանսավորման միջոցով, այժմ, թեմատիկ ֆինանսավորման պարագաներում, ստեղծվել չեն կարող, եթե դրան զուգահեռ չիրականացվի պետական հստակ պատվերների ձևով ֆինանսավորում։

Արծարծվեցին նաև հայ միջնադարագիտությունը մի նոր՝ մշակութաբանական աստիճանի բարձրացնելու պահանջը, գրաբարի հիմունքները դպրոցում ավանդելու անհրաժեշտությունը, միջնադարագետ մասնագետների պատրաստման խնդիրները։

Վիգեն ՂԱԶԱՐՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր
Պավլիկ ՁՈՐԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

«Ինչու ասանկ մարդիկ շուտ կմեռնին»

«Ինչու ասանկ մարդիկ շուտ կմեռնին» մի ատիթով ասել է Վիլյամ Սարոյանը։ Ափսոսանքի այդ զգացումն ունենանք, երբ Հայաստան հասավ Կարո Հալաբյանի մահվան բոթը։ Չէ որ ճարտարապետության այդ ականավոր վարպետի ու գործչի 60-ը հագիվ էր լրացել, տակավին գտնվում էր ստեղծագործական կարողությունների բարձունքին, լի էր բազում ծրագրերով։

Կարո Հալաբյանը ծնվել է 1897 թ. հուլիսի 29-ին Գանձակ քաղաքում։ 1906 թ. ընտանիքով փոխադրվելով Թիֆլիս, սովորում է հանրաճանաչ Ներսեսյան դպրոցում, ուր բացի ընդհանուր ուսումնառությունից, բարձր մակարդակի վրա էր դրված աշակերտների գեղագիտական դաստիարակությունը։ Այդ հանգամանքն իր կարևոր նշանակությունը ունեցավ նկարչական ունակություններով ու ձայնային տվյալներով օժտված երիտասարդի ճակատագրում։

Երևան տեղափոխվելուց հետո սկսվում է նրա կյանքի բուռն ստեղծագործական շրջանը։

1923 թ. Կարո Հալաբյանը գործուղվում է Մոսկվա։ Սկզբում ընդունվում է Մոսկվայի կոնսերվատորիա՝ իր թավ բարիտոնը կատարելագործելու նպատակով։ Սակայն որոշում է ճարտարապետական կրթություն ստանալ «Վխուտեմաս» կոչվող կրթօջախում։ Ներսեսյան դպրոցի իր դասընկերներ Միքայել Մազմանյանի և Գեվորգ Քոչարի հետ նույն ինստիտուտում համատեղ ուսանելիս, նրանք հարեցին ճարտարապետության արդիականացման ուղղությանը, որպիսին գլխավորում էր Կարո Հալաբյանը։

Ճարտարապետի դիպլոմով նրանք 1929 թ. փոխադրվեցին Երևան։ Հալաբյանի տնօրինությամբ ստեղծված «Գիպրոգոր» նախագծային ինստիտուտում նրանք ծավալվեցին իրենց գործունեությունը, որն իր ուղղությամբ հակադրվեց դասական ճարտարապետությանը նորովի ազգային նկարագրով բնորոշ Ալեքսանդր Թամանյանի ստեղծագործական դպրոցի ուղղությանը։ Իրենց նախագծերով կառուցված շենքերի թվին են պատկանում կառուցողների ակումբի, «Մոսկվա» կինոթատրոնի (Գ. Քոչար, Տ. Երկանյան), «Ճախմատաձև» բնակելի տունը, (Մ. Մազմանյան), «Ավանգարդ» թերթի խմբագրության, (Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան, Գ. Քոչար), երկրաբանության վարչության և տուբերկուլյոզային դիսպանսերի շենքերը (Կ. Հալաբյան)։ Հետաքրքիր մտահղացումներով էր բնորոշ Կոմունայի տան նախագիծը (Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան), որով առաջարկվում էին կենցաղի կազմակերպման նոր լուծումներ (չի իրականացվել)։

Ցանկանալով ընդարձակել իր ստեղծագործության ոլորտը, զբաղվել «Մեծ կտավի» գործերով, Կարո Հալաբյանը 1931 թ. փոխադրվում է Մոսկվա, ուր ընթանում է իր հիմնական գործունեությունը։ Մոսկվայում ծավալված առաջին իսկ քայլերը պսակվեցին հաղթանակով։ Մասնակցելով «Սովետների պալատի» նախագծման համար հայտարարված մրցույթին, Կարո Հալաբյանն իր հեղինակակցի՝ Վ. Սիմբիրցևի հետ արժանացան առաջին կարգի մրցանակի։ Ճարտարապետական- քաղաքաշինական նախագծումների լայն ասպարեզ բացվեց տարբեր խմբավորումների պատկանող Մոսկվայի ճարտարապետների համար։ Կարո Հալաբյանը պատկանում էր «Ճարտարապետների համամիութենական ասոցիացիա» առաջադիմական խմբավորմանը։ Երբ 1932 թ. տեղի ունեցավ երկրի ստեղծագործական կազմակերպությունների միավորումը, 1934 թ. նա գլխավորեց ԽՍՀՄ ճարտարապետների միության ստեղծման կազմկոմիտեն, իսկ 1937 թ. տեղի ունեցած հիմնադիր համագումարում ընտրվեց վարչության պատասխանատու քարտուղար։

Ճարտարապետական արվեստի արդիականացմանն հետամուտ ղեկավարի շրջահայացությամբ, կազմակերպական մեծ ունակություններով ու բացառիկ աշխատասիրությամբ օժտված հայորդին, լայնորեն ծավալեց իր հասարակական գործունեությունը, ԽՍՀՄ ճարտարապետների միությունը բարձրացնելով առավել գործուն հասարակական կազմակերպությունների մակարդակի։

Սակայն ստեղծագործելու իր շռայլ տաղանդը չէր կարող նրան զերծ պահել ճարտարապետի գլխավոր առաքելությունից՝ նախագծել ու կառուցել կոթողային շենքեր, որոնցում ներդնելով մասնագիտական հավատամքը։ Առավել նշանավորների թվին է պատկանում Կարմիր բանակի թատրոնը Մոսկվայում, որի կառուցումն ավարտվեց 1940 թվին։ Չնայած վերուստ թելադրանքով իրականացրած իր ձևապաշտական հորինվածքին, հանդիսատեսային պյուռեն օգտագործական լուծումների առումով կատարյալ է։ Նույն ժամանակաշրջանին շարք մը տեսակների թվին են պատկանում Մոսկվայի պիոներական պալատի վերակառուցված շենքը (1936), Մոսկվայում համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի հայկական տաղավարը (որի համար իր հեղինակակցի՝ Ս. Սաֆարյանի հետ արժանացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման)։ Առանձնապես նշելի է 1939 թ. Նյու-Յորքի համաշխարհային ցուցահանդեսում Խորհրդային Միության տաղավարը (Բ. Իոֆանի հեղինակակցությամբ), որի շինարարությունը Կարո Հալաբյանը անձամբ ղեկավարեց, արժանանալով բարձր գնահատանքի և Նյու-Յորքի պատվավոր քաղաքացու կոչման։

Երբ գերմանաֆաշիստական հորդաները սպառնում էին ներխուժել Մոսկվա ու շատ հիմնարկներ էվակուացվեցին, իր տեղում մնաց ԽՍՀՄ ճարտարապետների միությունը՝ հայրենասեր իր ղեկավարի հետ միասին։ Նրա գլխավորած խումբը զբաղված էր ռազմավարական կարևոր օբյեկտների քողարկման միջոցառումների իրականացմամբ, ավերակի վերածված Ստալինգրադի վերահատակագծման նախագծի մշակմամբ։ Միևնույն ժամանակ զբաղված էր բանակ զորակոչված ճարտարապետների ընտանիքների սոցիալական վիճակի բարելավման, նաև ռազմաճակատից նշանավոր ճարտարապետներին հետ կանչելու համար իր միջնորդությամբ։

Կարո Հալաբյանը չէր խզում իր կապերը Հայաստանի հետ, ամեն կերպ աշխատում էր օգտակար լինել իր հարազատ ժողովրդին, արվեստակից ընկերներին։ Պատերազմի տարիներին, երբ թիկունքում մնացած կամ բանակից զորացրված ճարտարապետների զգալի մասը զրկված էին ստեղծագործելու հնարավորությունից, նա Հայաստանի ճարտարապետների միությանը միջոցներ տրամադրեց նրանց մասնագիտական, այդ թվում հուշարձանների ուսումնասիրման և չափագրման գործում, ներգրավելու համար։ Օգնել է հեռավոր աքսորում գտնվող իր ընկերներին՝ Մ. Մազմանյանին և Գ. Քոչարին։ Հայաստանի գիտությունների նորաստեղծ ակադեմիան ողջունեց դրա գլխավոր շենքի նախագծմամբ, որը կատարել էր Վ. Տաուշկանովի մասնակցությամբ։ (Չի իրականացվել) Նույն ճակատագրին արժանացավ իր և Ս. Սաֆարյանի կողմից մշակված Երևանի դրամատիկական թատրոնի նախագիծը։

Կարո Հալաբյանի ճարտարապետության տեսության ու պրակտիկային նվիրված զեկուցումներն ու աշխատությունները նրան միջազգային չափանիշով լայն ճանաչում բերին։ Նրան շնորհվեց ճարտարապետների Բրիտանական կայսերական միության պատվավոր անդամի կոչում, բազմաթիվ այլ պարգևներ։ 1948 թվին նա արժանացավ ճարտարապետության դոկտորի գիտական աստիճանի։ Նրա անմիջական ջանքերով ու գործուն մասնակցությամբ 1947 թ. Բրյուսելում կայացած կազմակերպական ժողովում ստեղծվեց Ճարտարապետների Միջազգային Միությունը, որի ղեկավարմանը մասնակից եղավ տարիներ շարունակ։ Կարո Հալաբյանը լայնածանոթ էր արևմտյան երկրների ճարտարապետության և շինարարության առաջադիմական գործընթացին ու ջանքեր էր գործադրում որպեսզի դրանք արմատավորվեն մեր երկրում։ Սակայն այն տարիներին իշխող գաղափարական դիկտատը այդ ճիշտ դիրքորոշումը մերժեց՝ որակելով որպես ստիրաքարշություն կապիտալիստական աշխարհի նկատմամբ։ Արդյունքում 1949 թ. Կարո Հալաբյանն ազատվեց ԽՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի փոխպրեզիդենտի պաշտոնից, ինչպես ԽՍՀՄ ճարտարապետների միության ղեկավարությունից։

Իրեն վիճակված կյանքի մնացած մասը՝ մինչև 1959 թ. Կարո Հալաբյանը գլխավորելով «Մոսպրոյեկտ» նախագծային ինստիտուտի արվեստանոցներից մեկը, զբաղվեց միայն ճարտարապետական նախագծմամբ։

Կարո Հալաբյանի ստեղծագործությանը բնորոշ է կառուցվածքի ինքնատիպության ճշմարտացի մեկնաբանում, նորարարական անդուլ որոնումներ, պրոֆեսիոնալ բարձր վարպետություն, հասարակության կյանքում ճարտարապետության գաղափարական և նյութական դերի բարձր գիտակցություն։

1955 թ. գարնանը նա վերջին անգամ Հայաստան ժամանեց։ Հայաստանի Ճարտարապետների միության մարդաշատ դահլիճում հանդես եկավ զեկուցմամբ՝ ԽՍՀՄ-ում նախագծման և շինարարության գործընթացի արմատական վերակառուցման մասին, այցելեց Ավանի, Պտղնիի և Գառնիի հուշարձանները, հիացավ դրանցով, կարճատև հանգըստացավ Սևանա կղզու հանգըստի տանը։ Դա մեր վերջին հանդիպումն էր։

Վարազդատ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ակադեմիկոս

Գիտական փայլատակումներից մեկը

Օրբելին, ծնվել է Թաղկանոցում։ 17 տարեկան հասակում, ոսկե մեդալով ավարտելով Թիֆլիսի գիմնազիան, նա ուսումը շարունակում է Պետերբուրգի ռազմա- բժշկական ակադեմիայում։ Ավարտելուց հետո նա աշխատում է որպես բժիշկ և միաժամանակ գիտական հետազոտություններ կատարում մեծահամբավ ֆիզիոլոգ Իվան Պավլովի մոտ։ 26 տարեկանում պաշտպանում է գիտական թեզ և ստանում բժշկության դոկտորի գիտական աստիճան։ 1909 թվականին, Պավլովի երաշխավորությամբ, Օրբելին գործուղվում է արտասահման և Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի խոշորագույն ֆիզիոլոգիական կենտրոններում մի շարք ինքնատիպ գիտական հետազոտություններ կատարելուց հետո, վերադառնում է հայրենիք, ուր ծավալում է գիտական, մանկավարժական և գիտահասարակական լայն գործունեություն։ Ծուտով հրավիրվում է Պետերբուրգի ռազմա-բժշկական ակադեմիա՝ կարդալու զգայարանների ֆիզիոլոգիայի նոր դասընթացը։ 1914-ին Օրբելին գլխավորում է նաև հայտնի անատոմ և մանկավարժ Պ. Լեսգաֆտի անվան Պետերբուրգի կենսաբանական լաբորատորիայի ֆիզիոլոգիական կաբինետը և կարճ ժամանակում կալանի հիմքի վրա ստեղծում է ֆիզիոլոգիական բաժանմունք և նշանակվում այդ բաժանմունքի ղեկավար։ Հետագայում բաժանմունքը վերածվեց ինստիտուտի, որի ֆիզիոլոգիական ամբիոնը մինչև 1927 թվականը գլխավորեց Օրբելին։

1920 թ. Լևոն Օրբելին ընտրվում է Պետերբուրգի բժշկական ինստիտուտի պրոֆեսոր։ Նրա հետաքրքիր և բովանդակալից դասախոսությունները մեծ սեր ու հետաքրքրություն էին առաջացնում ուսանողների շրջանում, նրանցից շատերը ցանկություն էին հայտնում մասնակցելու ամբիոնի գիտական փորձերին։ 1925 թվականի Ի. Պ. Պավլովը ինքնակամ թողնում է ռազմա- բժշկական ակադեմիայի ֆիզիոլոգիայի ամբիոնը և այն հանձնում իր տաղանդաշատ աշակերտին և հետնորդին՝ Լեվոն Օրբելուն։

Օրբելու առաջին խոշոր գիտական նվաճումներից էր այն, որ նա դրեց ֆիզիոլոգիական գիտության մի նոր բնագավառի՝ էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմքը։ Այդ կապակցությամբ «Պրիրոդա» ամսագրում նա 1923 թ. հրապարակեց իր «Էվոլյուցիոն սկզբունքի մասին» ծրագրային նշանավոր հոդվածը, որը սկիզբ դրեց ֆիզիոլոգիայի այդ բնագավառի լայն զարգացմանը։ Նույն թվականին Օրբելու ակտիվ մասնակցությամբ, ստեղծվեց փորձառական բժշկության միութենական ինստիտուտը, որտեղ նա կազմակերպեց էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի բաժին։

Հենց այստեղ կատարվող հետազոտություններում ստեղծվեց Օրբելու ուսմունքը՝ սիմպաթիկական նյարդային համակարգի հարմարեցնող-սնուցիչ ազդեցությունը կմախքային մկանների վրա։ Գիտնականի հետագա հետազոտություններով պարզվեց, որ սիմպաթիկական նյարդային համակարգը հարմարեցնող-սնուցիչ ազդեցություն ունի նաև կենտրոնական նյարդային համակարգի և մյուս օրգանների վրա։

Իվան Պավլովը բարձր գնահատելով սիմպաթիկական նյարդային համակարգի հարմարեցնող-սնուցիչ ներգործության վերաբերյալ Օրբելու հետազոտությունները, գրեց. «Լևոն Օրբելին լուծեց սնուցիչ նյարդավորման մասին գրեթե հարյուր տարվա գաղտնիքը»։ Զբաղվելով ուղեղիկի ֆիզիոլոգիայով, Օրբելուն հաջողվում է պարզել, որ ուղեղիկը կարգավորում է ոչ միայն օրգանիզմի շարժողական գործունեությունը, այլ նաև ազդեցություն է թողնում օրգանիզմի վեգետատիվ ֆունկցիաների վրա։

Հինելով օրգանիզմի բարձրագույն նյարդային գործունեության ամենատաղանդավոր հետազոտողներից մեկը, Օրբելին ոչ միայն բազմակողմանիորեն զարգացրեց այդ ուսմունքը, այլև նաև այդ ուսմունքի վերաբերյալ պավլովյան սկզբունքները ներդրեց Էվոլյուցիոն ֆիզիոլոգիայում։ Օրբելին բեղմնավոր աշխատանքներ է կատարել նաև վերլուծիչների ու ցավի ֆիզիոլոգիական մեխանիզմների բացահայտման ուղղությամբ։

Երկրորդ խնդիրը, որ նույնպես առաջ քաշեց Օրբելին, ողնուղեղային համադասեցման (կոորդինացիայի) հարաբերությունների պրոբլեմն էր։

Օրբելին բեղմնավոր հետազոտություններ է կատարել նաև ներքին սեկրետային գեղձերի վերաբերյալ։ Նրա ղեկավարությամբ կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ սիմպաթիկ նյարդերը ազդեցություն ունեն գեղձերի գործունեության վրա։ Գիտնականի հետազոտությունները ցույց տվեցին, որ սիմպաթիկ նյարդերը ունեն ինչպես ուժեղացնող, այնպես էլ թուլացնող ազդեցություն։ Նրանց ազդեցությունը կախված է գեղձերի տեսակից։ Օրբելին հետազոտեց նաև սեռական գեղձերի ազդեցությունը կենդանիների զարգացման, աճի, նյութափոխանակության, ինչպես նաև նրանց հոգեբանության վրա։ Նրա հետազոտությունները ցույց տվեցին, որ սեռական գեղձերը ազդեցություն ունեն նաև ինտելեկտի զարգացման վրա։

Օրբելին մեծ ուշադրություն դարձրեց նաև ներքին սեկրետային գեղձերի ազդեցությունը սրտի գործունեության վրա։ Նրա հետազոտությունները ցույց տվեցին, որ սրտի գործունեությունը կարգավորվում է նաև գեղձերի ազդեցությամբ։

Օրբելին մեծ ուշադրություն դարձրեց նաև ներքին սեկրետային գեղձերի ազդեցությունը սրտի գործունեության վրա։ Նրա հետազոտությունները ցույց տվեցին, որ սրտի գործունեությունը կարգավորվում է նաև գեղձերի ազդեցությամբ։

Օրբելին մեծ ուշադրություն դարձրեց նաև ներքին սեկրետային գեղձերի ազդեցությունը սրտի գործունեության վրա։ Նրա հետազոտությունները ցույց տվեցին, որ սրտի գործունեությունը կարգավորվում է նաև գեղձերի ազդեցությամբ։

ԷԴԻՊԻ ԲԱՐԴՈՒՅԹԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՎԱՆԴԱ-ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ

Հասարակության ճանաչման համար կարևոր է ընտանիքի ուսումնասիրումը, քանի որ, ըստ էության, տոհմը, ցեղը, ժողովուրդը ընտանիքի շարունակական զարգացման արդյունք են։

Ընտանեկան եռանկյունու՝ հայր-մայր-զավակ փոխհարաբերությունների ընդերքում ծնունդ առնող ծնողական բարդույթը բազմաշերտ է ու բազմակողմանի։

Ընտանեկան բարդույթը լինում է երկու տեսակ «Էդիպի բարդույթ» և «Էլեկտրայի բարդույթ»։ Այդ անվանումները գալիս են հին հունական դիցաբանությունից, ուր արտացոլված են ծնողների նկատմամբ սեռական հակում դրսևորող որդի և դուստր զավակների փոխհարաբերությունները ծնողների հետ։ Հոգեանալիտիկների, մասնավորապես Ֆրեյդի կողմից հիմնական ուշադրությունը դարձվել է հոր և որդի փոխհարաբերություններին՝ «Էդիպի բարդույթին»։

Հայ իրականության մեջ, մասնավորապես Արարատյան ավանդապատումներում, «Էդիպի բարդույթը» դրսևորվում է «Սասունցի Դավիթ» էպոսում, «Արտաշես և Արտավազդ» առասպելում, հերոսապատում հեքիաթներում։

«Սասունցի Դավիթ» էպոսում հայր և որդի փոխհարաբերությունները զարգանում են Մեծ Մհեր-Սասունցի Դավիթ-Փոքր Մհեր շրջանակում։ Մեծ Մհերը գիտակցաբար զոհում է իրեն, որպեսզի ծնվի որդին՝ Դավիթը (Դավիթ՝ դավանանքի արդյունք), իսկ վերջինս կնոջ համար կռվի է բռնվում որդու՝ Փոքր Մհերի հետ և ամիծելով նրան՝ դատապարտում անմահության։ Փոքր Մհերը անկարող է լինում սպանել իր հորը, քանի որ երկուսն էլ ժառանգականորեն կապված են հաղթության խորհրդանշանի՝ «Խաչ պատերազմի» հետ։

Այստեղ տեղին է հիշել համանման պատումների հելլենական և իրանական տարբերակները։ Հունական դիցաբանությունում իմաստունը՝ Խանդութ Խանումը։ Նրա խնդրանքով Աստված դադարեցնում է կռիվը, և ընտանեկան օջախը, որի պահապանն էր «Խաչ Պատերազմը», փրկվում է քանդվելուց։

«Խաչ Պատերազմը» պարզապե՛ս ֆիզիկական ուժի խորհրդանիշ չէ, այլ Արարչի շնորհը Սասունի դյուցազուններին։ Այն յուրօրինակ ուխտ էր դյուցազնի և Աստծո միջև ու ներկայացնում էր բարոյական նորմերի մի ամբողջություն։ Ահա ինչու, թեև «Խաչ Պատերազմը» Դավիթի բազկին է, այն ոչ թե օգնում, այլ Մհերի ձեռքով հարվածում է նահապետական բարքերի մեջ փոփոխություն մտցնել ուզող ընտանիքի հորը։ Դա երևում է Դավիթի խոստովանանքից։ Տեսնելով իր աջ թևի (արմանդի) սևացած խաչը, նա դառնությամբ ասում է կնոջը, որ իրեն հարվածում էին ոչ թե Մհերի, այլ «Խաչ Պատերազմի» զարկերը։

Հասարակական գիտակցությունը, դարերի ընթացքում մշակված բարոյական նորմերի խորհրդանիշ «Խաչ Պատերազմով», այլաբանորեն պաշտպանում է նահապետական ընտանիքը, սրբացնում այն, չի ընդունում երդմնազանցությունը՝ մարդկային խմբի առողջ փոխհարաբերությունների առանցքը համարելով ազնվությունը։ Ազնիվ անձանցից կազմված ընտանիքը ինքնազարգացող հասարակության գոյության հիմքը է, և նրա քայքայումը հարցականի տակ է դնում հասարակության հետագա գոյատևումը։

Ինչպես տեսնում ենք, հայ ցեղամտածողությունը ոչ մի կերպ չի հանդուրժում արտասամուսնական կապերը։ Ավելին, փորձը ցույց է տալիս, որ նման կապերը վտանգում են հասարակության գոյությունը։ Դավիթը սպանվում է ապօրինի կապի արդյունք՝ իր աղջկա ձեռքով (էլեկտրայի բարդույթ)։ Սույն իրողությունը դիտվում է նաև Մեծ Մհեր և կրտսեր Մտրա Մելիք փոխհարաբերություններում։ Կրտսեր Մտրա Մելիքը, որ ծնունդն էր գինովցած Մեծ Մհերի և թշնամի երկրի թագուհի Իսմիլ Խաթունի, մեծանալով, սկսում է սպառնալ հայերին։ Նա պատուհասում է իր հորը ծնունդ տված հասարակությանը՝ սասունցիներին։ Այստեղ էլ դրսևորվում է սոցիալականացված «Էդիպի բացասական բարդույթը»։ Նա փորձում է ոչնչացնել հոր կառուցած տաճարները, հավաքած կենդանիներին և ընդհանրապես վերացնել հայերի ցեղը։ Նա հորից ժառանգել է ահռելի ֆիզիկական ուժը, սակայն ոչ սոցիալական փորձը, գիտելիքներն ու բարոյականությունը։ Այդ իսկ պատճառով մենամարտում նա պարտվում է իր երիտասարդ խորթ եղբորից՝ երիտասարդ Դավթից, որը ժառանգել էր պապենական սուրը, Հրեղեն Քուսկիկը և, իհարկե, «Խաչ Պատերազմը»։ Բոլոր այդ բախումներում կենսաբանականից բացի, կան նաև սոցիալական դրդապատճառներ։

Այսպիսով կարելի է ասել, որ երբ ավագ և կրտսեր սերունդները օտարացված են միմյանցից, երբ որդին չի ժառանգում նախնիների սոցիալական փորձը, նրանց բախումը հանգեցնում է մահվան (մի դեպքում անհատի, իսկ մյուս դեպքում՝ ողջ հասարակության՝ Թեբեի թագավորության)։

Ինչպես չի կարելի արմատախիլ անել հինը, փորձվածը, այնպես էլ չի կարելի մերժել նորը, առաջավորը։ Նախնիները հանդիսանում են իմաստության աղբյուր, իսկ նոր սերունդը պարտավոր է ստեղծել նորը՝ նախնիներից ժառանգած նախահիմքի վրա։

Արարատյան իրականության մեջ «Էդիպի բարդույթը» արտացոլվում է նաև «Արտաշես և Արտավազդ» առասպելում։ Այստեղ հակասությունը ծնվում է Արտաշես արքայի և Արտավազդ արքայազնի միջև։ Արտավազդը ընդվզում է մահացած արքայի հանար հպատակների ինքնազոհաբերվելու երևույթի դեմ։ Հանգուցյալ արքան, հարություն առնելով, անիծում է արքայազնին՝ շղթայակապ փակվելու Արարատ լեռան անդնդախոր վիհերում։ Այստեղ դրսևորվում է «սոցիալական Էդիպի դրական բարդույթը»։ Անկասկած, Արտավազդը հանդես է գալիս որպես կրոնասոցիալական բարեփոխումների ջատագով։ Ինչպես նա, այնպես էլ անտիկ աշխարհում ավտորիտար իշխանության դեմ ծառացող մյուս հերոսները (օրինակ՝ Պրոմեթևս) հեռացվում են հասարակությունից ու տանջանքներով սպասում իրենց ազատության ժամին՝ հասարակական կյանքի վերափոխումներին։

Փոքր Մհերը, որին անկարող են հաղթել անգամ հոգեառ հրեշտակները, ճնշվելով այն քանի գիտակցումից, որ ինքը չի կարողանում աշխարհը ազատել անարդարությունից, ստից ու կեղծիքից, այցի է գնում իր մահացած ծնողների գերեզմանը՝ Մարութա Սար (Մարդուկի Սար) և խորհուրդ է հարցնում հորից ու մորից։

Էպոսում մահացած հոր և մոր հետ Մհերի հաղորդակցվելու դրվագը հագեցած է ցեղապաշտական և քրիստոնեական այլաբանություններով։ Ծնողները, պատճառաբանելով, որ իրենք անկարող են օգնել նրան, խորհուրդ են տալիս գնալ «Ագռավու Քար» (ագռավը շատ ժողովուրդների համար մինչև օրս էլ եղել և մնում է իմաստության խորհրդանիշ)։

Մերացած, կյանքի փորձով իմաստնացած Դավիթն ու նրա կինը ըստ էության մերժում են մարդուն և հասարկությունը ֆիզիկական ուժի միջոցներով վերափոխելու հնարավորությունը և իրենց ապագան՝ Փոքր Մհերին, պատկերացնում միայն դեպի Իմաստություն տանող ճանապարհով ընթանալու մեջ։

Անարդար հասարակության հետ կռիվներից հոգնած, բայց թուրը պատրաստ պահող Փոքր Մհերը իր քարանձավը մտած մարդուն հայտնում է, որ ինքը սպասում է հասարակական գիտակցության վերափոխմանը։ Գերմարդու վերաբերյալ այդ միտքը հետագայում շատ լուրջ ընդունակ է ձևակերպել Ֆ. Նիցշեն, գրելով. «Ես նա եմ, որ պետք է գա...»։

Հայերի ցեղապաշտական մեսիան՝ Փոքր Մհերը, Արևը խորհրդանշող ծպտված աստվածության դրսևորումն է քրիստոնեության շրջանում (մինչև օրս էլ հայերը երդվում են իրենց ծնողների արևով)։

Այդ աստվածությունը երկատված է Մեծ և Փոքր Մհերների, որոնք միևնույն երևույթի՝ արարման և լուսաբացի ժամանակային տարբեր դրսևորումներն են, ժողովրդի խորհրդանիշի՝ Դավիթի, սկիզբն ու ապագան։

Արարատյան ավանդազրույցներում Մհերը և Արտավազդը, որքանալով ոչ միայն ծնողներից, այլև հասարակությունից, փորձել են մշակել ոչ թե անհատի ինքնուրույն մտածողություն, այլ հասարակական։ Այսինքն նրանց միջոցով ողջ փորձ է անում գտնելու իր ինքնազարգացման ապահովող բանաձևը։

Վերադառնալով մեր խնդրո առարկային, պետք է նշել, որ զարգացման որոշակի մակարդակում հասարակության հավաքական գիտակցությունը, կրող հերոս-զավակները կրկնում են հանդիսանալու իրենց ծնող նախնիներին, բայց արդեն ոչ թե ֆիզիկական մենամարտի, այլ կենսափիլիսոփայական բանավեճի բռնվելու համար։

Քննարկելով «Էդիպի բարդույթը» արարատյան ասքերում, նկատելի է դառնում, որ հայ ցեղամտածողության համար անցանկալի է ընտանիքի անդամների սպանվելը մեկը մյուսի կողմից։ Հայրեր-որդիներ հակադրությանը, հանձինս Դավթի ու Մհերի, հայ ժողովուրդը տալիս է հանճարեղ փիլիսոփայական լուծում, նոր մակարդակի բարձրացնելով մարդկային մտածողությունը։ Արարատյան երկրի՝ «Ազնաց Տան», «ազնաուր» հերոսները նախնական բնազդներ, ազդեցությամբ ոչ թե սպանում են միմյանց, ինչպես Էդիպը կամ էլ Ռուստամ Զալը, այլ լրացնում են և ուժ տալիս մեկը մյուսին՝ այս անսկիզբ և անվերջ, հավերժական գոյապայքարում։

Ազգային էպոսում որպես անձի կենսագործունեության դրդապատճառային համակարգի հիմնադրույթներ են դիտվում պայքարն ու արարումը, պայքար հանուն նորի, պայքար հանուն նախնիների դավանանքի, հնի մեջ մերժելով չարն ու անմարդկայինը, հինը վերակերտելով՝ նորը արարելը։

Դա է հայ ընտանիք-հանրության կենսասոցիալական անմահության բանաձևը։ Հայ ժողովրդի էպիկական հերոսների կռիվը միայն իրենց տան համար չէ։ Նրանք կռվում են հանուն համամարդկային արժեքների, և աշխարհի չորս կողմերի մարդկանց պատգամում են ապրել խաղաղության մեջ։ Նրանք պայքարում են հանուն մարդկանց արդար ու առողջ ապրելակերպի։

Աշոտ Լ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԵՊՀ-ի մանկավարժության ամբիոն

Համլետ Վարդապետյանը դեռ ասելիք ունի

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

Մեր ժողովրդի պատմությունը վերելքների և վայրէջքների պատմություն է։ Ճգնաժամերի, օտարների ձեռքով հասած մեր կյանքը հասել է գագաթի ու նորից ծլարձակել, զարգացում ապրել։ Այդ կատակլիզմների ժամանակ միշտ ծնվել, գործել են տաղանդավոր մարդիկ, որոնք բարձրացրել են ոչ միայն մեր ժողովրդի վարկը, այլև հարստացրել համաշխարհային քաղաքակրթությունը։ Այդ մարդկանց բնորոշ է խորը հայրենասիրությունն ու անձնազոհությունը։ Ալեքսանդր Սպենդիարյան, Մարտիրոս Սարյան, Ալեքսանդր Թամանյան... Եվ շատ ուրիշներ, թողնելով ապահով կյանքն ու պայմանները, եկան Հայաստան՝ օգտակար լինելու իրենց ժողովրդին։

Այդպիսին է և ակադեմիկոս Համլետ Վարդապետյանը։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Պիտի լիներ այնպես, որ Մեծ եղեռնից մազապուրծ վանեցի Հարությունը և Էրզրումցի Զարուհին Գյումրիի որբանոցում հանդիպեն իրար, ամուսնանան և ճակատագրի բերումով ընկնեն Փարիզ։ Ու նաև պիտի լիներ այնպես, որ նրանց Համլետ որդին ավարտեր Փարիզի ֆիզիկայի և քիմիայի բարձրագույն դպրոցը, հետո՝ նաև Սորբոնի համալսարանը։

Ստանալով ֆիզիկոսի մասնագիտություն, Համլետ Վարդապետյանը սկսում է աշխատել Փարիզի ռադիումի ինստիտուտի Պյեր Կյուրիի անվան լաբորատորիայում, այնուհետև՝ Օրսեյի միջուկային ֆիզիկայի ինստիտուտում և մեծահռչակ Ժոլիո Կյուրիի ղեկավարությամբ պաշտպանում դոկտորական թեզ։

Եվ քանի որ Հարությունն և Զարուհի ամուսիններն այն համոզման էին, որ իրենց զավակները անպայման պիտի ապրեն ու աշխատեն իրենց հայրենիքում, 1958-ին Վարդապետյանների ընտանիքը Փարիզից վերադառնում է Հայաստան։ Այդ ժամանակից մինչև այսօր Համլետ Վարդապետյանը աշխատում է Երևանի ֆիզիկայի ինստիտուտում, դասախոսում պետական համալսարանում։ Երկար տարիներ նա եղել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ, համալսարանի միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ։

1980-ին Համլետ Վարդապետյանը ընտրվել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս։ Գիտությանը բերած մեծ ծառայությունների համար արժանացել է Հայաստանի պետական մրցանակի, պարգևատրվել «Պատվո նշան» շքանշանով։

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համլետ Վարդապետյանի գիտական ուսումնասիրությունների տիրույթը լայն է ու տարողունակ՝ ցածր էներգիայի միջուկային ֆիզիկա, բարձր էներգիայի ֆիզիկա և տարրական մասնիկների ֆիզիկա։

Գիտական հետազոտությունների առանձին շարք են կազմում կրկնակի բևեռացված պրոտոնների ուսումնասիրությունը, քվազիմեներանգ, բևեռացված ֆոտոնների փոխազդեցությունը և բևեռացված միջուկի փոխազդեցության հետևանքով մեզոնների և նուկլոնային ռեզոնանսների առաջացումը և նրանց հատկությունները։ Առաջիկայում նախատեսվում է ուսումնասիրել բևեռացման երևույթները՝ ֆոտոծնման պրոցեսում։

Համլետ Վարդապետյանը միաժամանակ շարունակում էր զբաղվել ռադիոակտիվ պատրաստուկի օգնությամբ միջուկի նուրբ կառուցվածքի ուսումնասիրություններով։ Եվ քանի որ բարձր էներգիայի էլեկտրոնների և ֆոտոնների միջոցով նույնպես հնարավոր է ուսումնասիրել միջուկի հատկությունները, հետազոտվում են մի շարք միջուկների հատկությունները բարձր էներգիայի ֆոտոհեղքման պրոցեսում։ Վարդապետյանի գիտական նվաճումների շարքում պետք է արձանագրել այն, որ նրան հաջողվեց ապացուցել նեյտրոնային «մուշտակի» գոյությունը կապարի միջուկներում, որոշել նեյտրոնների բաշխման պարամետրերը տարբեր տարրերի միջուկների համար։

Մեծատաղանդ գիտնականի անվան հետ է կապված նաև անհայտ էլեկտրամագնիսական ճառագայթման գրանցումը։ Երևանի ֆիզիկայի ինստիտուտի արագացուցիչի վրա առաջին անգամ ուշադրություն դարձրեցին, որ բարձր էներգիայի էլեկտրոնների փունջը անցնելով բյուրեղի միջով, առաջացնում է անհայտ ճառագայթում։ Հետագայում ուրիշ գիտական կենտրոններում նույնպես նկատեցին այս նոր ճառագայթումը։ Առաջիկայում ծրագրված է ուսումնասիրել ռելյատիվիստիկ էլեկտրոնների փոխազդեցությունը որոշակի կողմնորոշում ունեցող միաբյուրեղի հետ։

Անսահման աշխատասիրություն, բարություն, շիտակություն, շռայլ ու անմնացորդ նվիրում գիտությանը, իր ժողովրդին և հայրենիքին,— ահա Համլետ Վարդապետյանի մարդկային նկարագիրը։ Նա գիտնական է ու գիտության նորարար կամոքն Աստծու։

Համլետ Վարդապետյանը չափազանց պահանջկոտ է թե իր, թե աշխատակիցների նկատմամբ։ Նրա ստեղծած «Գամմա—1» սարքավորումը պատրաստված է այնպես, որ ստուգում է ոչ միայն ֆիզիկոսի ստացած տվյալը, այլև տեղեկություն է տալիս նախնական ֆոտոնային փնջի պարամետրերի մասին։ Այլ խոսքով՝ հսկողության տակ է պահում արագացուցիչի ողջ անձնակազմի աշխատանքը։

Եթե ֆիզիկոսի ստացած տվյալը չի համընկնում արագացուցիչի սպասարկող կազմի տվյալի հետ, փորձը կանգեցվում է։ Սա է պատճառը, որ Վարդապետյանի լաբորատորիայում ստուգված տվյալները, գիտական եզրակացությունները երբևէ ոչ մեկի կողմից չի հերքվել, չի ուղղվել, չի շտկվել, տարակույս չի հարուցել։

Ավելին, բազմիցս վերանայվել, սրբագրվել են տեսական այն ենթադրությունները, որոնք չեն հաստատվում Վարդապետյանի ստացած տվյալներով։ Նաև սրա համար են աշխարհի գիտնականները հավատում Վարդապետյանի փորձարարական և տեսական աշխատանքներին, նրա գիտական հիմնավորումներին ու եզրակացություններին։ Վճռական հանգամանք, որ փաստում են Վարդապետյանի միջազգային բարձր հեղինակությունն ու համբավը։

ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Վերջին տարիներին Հայաստանը հայտնվել է տնտեսական ծանր կացության մեջ։ Սա բացասաբար է անդրադառնում ինչպես ամբողջ հայ գիտության, այնպես էլ ֆիզիկայի ինստիտուտի աշխատանքների վրա։ Հինգերորդ տարին է արդեն, որ մեր ժողովրդի հպարտությունքներից մեկը՝ Երևանի էլեկտրոնային արագացուցիչը, չի գործում։ Ֆիզիկայի շատ խնդիրներ, որոնք ակադեմիկոս Վարդապետյանը ծրագրել էր լուծել այստեղ, մեր արագացուցիչի վրա, արդեն լուծվել են այլ գիտական կենտրոններում։ Չէ որ ժամանակը չի սպասում։ Ով ասես, որ չէր հուսահատվի ու թևաթափ լինի։ Սակայն միայն թե ոչ Վարդապետյանը։ Լավատես ու վստահ նա ասում է. «Արդի ֆիզիկայում հայ գիտնականները դեռ առջևում են, դեռևս ասելիք ունեն և կասեն իրենց խոսքը։ Դեռ կան խնդիրներ, որոնք կարելի է լուծել միայն Հայաստանում, մեր արագացուցիչի վրա։ Եվ մինչև 2010 թվականը համաշխարհային գիտությանը կարելի է ներկայացնել եզակի և գիտական մեծ արժեք ունեցող տվյալներ, որովհետև շատ հարցերով մենք դեռևս մրցակից չունենք։ Միայն թե արագացուցիչը աշխատի»։

Ջեմմա ԳԱԼՍՏՅԱՆ
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

Մի քաշքշուկի պատմություն

1961 թվականի սեպտեմբերին Հայկ. ԽՍՀ ԳԱ երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի («ԵՐՍԻ») ինստիտուտի հրավերով ընտանիքով Ուրալից տեղափոխվեցի Լենինական։ Երևանի պետական համալսարանն ավարտելուց հետո, ավելի քան 7 տարի ես այնտեղ աշխատում էի երկրաֆիզիկական արտադրական արշավախմբերում։

Լենինականի նորաստեղծ Երկրաֆիզիկայի ինստիտուտում շարունակեցի իմ աշխատանքը հանքային երկրաֆիզիկայի բնագավառում, բայց արդեն հետազոտական ոլորտում։

Տասնյակ տարիներ, հանգամանքների բերումով, ես հնարավորություն եմ ունեցել առնչվելու ինստիտուտի գիտական, գիտակազմակերպական և ֆինանսատնտեսական բազմաբնույթ փաստաթղթերի հետ։

Այդ նյութերի պատճենները տեսակավորվել, դասակարգվել են ըստ բնագավառների, ենթարկվել են վիճակագրական և փաստավավերագրական մշակման և այսօր դրանք ներկայացնում են որոշակի գիտական, մասնագիտական, պատմամշակութային արժեք՝ Գյումրի քաղաքում (Ծիրակի տարածքում) երկրի մասին գիտությունների զարգացման տեսանկյունից։

Կուտակվել են նաև Ծիրակի մարզի տարածքի գիտամշակութային և ժողովրդական ստեղծագործությանը վերաբերող մեծածավալ նյութեր, որոնց մի զգալի մասը մշակված և կազմված է, իսկ մյուս մասը՝ գտնվում է նախնական մշակման փուլում։

Հավաքված են նաև մեծաքանակ և բազմաբնույթ տեղեկատվական և կենսամատենագիտական նյութեր, հոդվածներ, լուսանկարներ՝ տարբեր բնագավառների վերաբերյալ։

Այս նյութերի հետագա ամբողջական մշակումը և գիտական համակարգումը (ժողովածուների և գուցե՝ մենագրությունների հրապարակման տեսանկյունով), ըստ ինձ շատ կարևոր և մեծ անհրաժեշտություն է՝ Ծիրակում (Գյումրիում) մատենագիտական, գիտամշակութային ինքնատիպ բազա ստեղծելու հեռանկարով։

Ահա այս նյութերը (լրագրային, ամսագրային հոդվածներ, լուսանկարներ, պլակատներ, լրագրային փաթեթներ, կազմած գրքեր և այլն) մշակույթի մարդկանց ի սպաս դնելու ակնկալիքով՝ ես ունեցա հետևյալ գրագրությունը.

25.08.95 ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների երկրի մասին գիտությունների սեկցիայի նախագահ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Բ. Կ. Կարապետյանին։

Ներկայումս արդեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Բորիս Կարապետյանը, հարցը համաձայնեցնելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանի հետ, վերջինիս անունից Գյումրիի քաղաքային խորհուրդ է ուղարկում մի պաշտոնական նամակ.

10.10.95 Գյումրիի քաղխորհրդի գործկոմի նախագահ, Մ. Հ. Վարդանյանին հետևյալ նամակը ավարտվում է հետևյալ բառերով.

«ՀՀ ԳԱԱ-ն խնդրում է Ձեզ, Գյումրիի թանգարաններից մեկում (նախընտրելի է «Կումայրի» պատմամշակութային արգելոցում) կազմակերպել Ծիրակի տարածքի մշակութային ուսումնասիրությունների ստորաբաժանում, հատկացնելով ֆինանսական միջոցներ։

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյան»։

6.11.95 Գյումրիի քաղխորհրդի նախագահ Մ. Հ. Վարդանյանը նամակը հասցեագրում է մշակույթի գծով հ. տեղակալ Աշոտ Պետրոսյանին՝ հետևյալ խնդրանքով. «Ելնելով վերոհիշյալից, խնդրվում է կազմել փոքր ձագիտական հանձնաժողով Ստեփան Բադալյանի հավաքածուն ուսումնասիրելու և արժեքավորելու նպատակով»։

11.01.96. «Կումայրի» թանգարանի տնօրեն Պ. Զաքարյանը նամակը հասցեագրում է ֆոնդապահ Ստեփան Տեր-Մարգարյանին՝ հետևյալ մակագրությամբ. «Խնդրում ենք ներկայացնել առաջարկություններ հանձնաժողովի կազմի վերաբերյալ»։

Եվ այստեղ արդեն հարցը մատնվում է լռության։ Մարզպետարանի ստեղծման և ՀՀ որոշ նախարարությունների վերակազմավորման կապակցությամբ, Պ. Զաքարյանը ընդհանրապես չի գտնում հավաքածուն ուսումնասիրել և արժեքավորել՝ պատճառաբանելով նոր կազմակերպված Ծիրակի մարզպետարանի վերաբերմունքը այդ հարցին։

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

նագավառներում Օրբելու և նրա դպրոցի ձեռք բերած նվաճումները, նրա բազմաթիվ ելույթները մամուլում, կոնգրեսներում, համագումարներում նոր աստիճանի բարձրացրին նրա հեղինակությունը ոչ միայն մեր, այլ նաև արտասահմանյան հեղինակավոր շրջաններում։ 1930 թ. Օրբելին ընտրվում է Փարիզի կենսաբանական ընկերության թղթակից անդամ, իսկ 1931-ին Գերմանիայի բնագետների Լեոպոլդինո-Կարոլինյան համագերմանական ակադեմիայի անդամ։ Հետագայում նա ընտրվում է Լոնդոնյան ֆիզիոլոգիական ընկերության անդամ, Նյու-Յորքի բժշկական ակադեմիայի պատվավոր անդամ, Պրագայի Կարլովի համալսարանի պատվավոր անդամ, Ռումինական բժշկական ակադեմիայի պատվավոր անդամ։

1936 թվականին Իվան Պավլովի մահից հետո, Օրբելուն հանձնարարվում է գլխավորել Պավլովի ղեկավարած երկու ծանրակշիռ ֆիզիոլոգիական հաստատությունները՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտը և Կոլտուշիի կենսաբանական կայանը։

Գիտական գործունեությանը զուգընթաց Օրբելին կատարում է նաև կարևոր և պատասխանատու գիտա-կազմակերպչական աշխատանք։ 1939-ին նա ընտրվում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կենսաբանական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, և երկար տարիներ ֆիզիոլոգների, կենսաքիմիկոսների և դեղաբանների համամիութենական ընկերության նախագահն էր, միևնույն ժամանակ Ի. Մ. Սեչենովի անվան ֆիզիոլոգիական ամսագրի և բազմաթիվ այլ ամսագրերի պատասխանատու խմբագիրը։ Հայրենական պատերազմի տարիներին նա նշանակվում է գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, ռազմա-բժշկական ակադեմիայի պետ և ծավալում է հայրենասիրական տիտանական գործունեություն, որի համար նրան շնորհվում է ռազմա- բժշկական ծառայության գեներալ գնդապետի և սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչումներ։

1950 թվական։

Այդ տարի զրպարտանքների ու սադրանքների նողկալի ալիք սկսվեց նրա դեմ։ Օրբելուն զբաղեցնող գրված բոլոր պաշտոններից, թողնելով միայն Լենգաֆտի անվան ինստիտուտի լաբորատորիան։ Արհամարհելով բանսարկությունները ու հայհոյանքները նա շարունակեց իր խորը և բովանդակալից գիտական հետազոտությունները բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի ուղղությամբ։ Նա սիրում էր կրկնել։ «Այն ինչ կատարվեց, միանգամայն անտրամաբանական է և անարդարացի։ Դա ինչ-որ թյուրիմացություն է»։ Եվ իրոք, արդարությունը ի վերջո հաղթանակեց։ 1955 թվականին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահությունը վերականգնեց նրա բարի անունը։



Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր

ՎԻՄԱՏԻՊ ՔԱՐԵՐՆ ՈՒ ԱԼՄԱՍՏՆԵՐԸ

(Սկիզբը՝ № 13-ում)

Իջևանի վիմատիպ քարերի հանքավայրի նշված երկու տեղամասերում կատարված նախնական հետախուզական աշխատանքների արդյունքով հայտնաբերվել են 5,2 մլն տոննա պաշարներ (2,5 մլն տ Խոլակեր տեղամասում և 2,7 մլն տ Ցամաքձորի տեղամասում), որոնք գնահատվել են «C» կատեգորիայով: Սակայն երկրաբանների ներկայացրած հաշվետվությունից պարզորոշ երևում է, որ կատարվել են ոչ թե նախնական, այլ մանրազնին հետախուզական աշխատանքներ և պաշարների մի մասը (III—III և XIII—XIII հետախուզական գծերի միջև) կարելի է գնահատել որպես «B» կատեգորիայի պաշարներ:

Ուստի Իջևանի վիմատիպ քարերի հանքավայրի նշված երկու տեղամասերում կարելի է, և անհրաժեշտ է, կատարել արդյունահանման աշխատանքներ՝ առանց դրանց լրահետախուզման վրա ավելորդ ծախսեր կատարելու և ժամանակ վատնելու: Այս հանքավայրի ռեսուրսները 50—100 անգամ ավելի մեծ են, քան հաշվարկված պաշարները:

Այնպես որ, Իջևանի վիմատիպ քարերը ոչ միայն կարող են բավարարել Հայաստանի երկու գործարանների պահանջները, այլ նաև նախկին ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող բոլոր գործարանների պահանջները՝ մի քանի հարյուր տարի: Հիշենք, որ Հայաստանի երկու գործարանների հեռանկարային պահանջարկը վիմատիպ քարերի գծով տարեկան կարող է կազմել 150 տ ոչ ավելի:

Երևանի «Այմաստ» գործարանի նախագծային հզորությունը կազմում է տարեկան 65 մլն կարատ, սակայն գոյության ողջ ընթացքում նրա արտադրանքը չի գերազանցել նախագծային հզորության 55 տոկոսը: Յոթանասունական թվականների վերջին (1977—1978 թթ.) գործարանի արտադրողականությունը կազմում էր տարեկան մոտ 30 մլն կարատ: Աստիճանաբար մեծացնելով արտադրողականությունը, 1987—1988 թթ. գործարանի արտադրանքի քանակը հասավ ամենամեծ թվին՝ տարեկան 55 մլն կարատ տարբեր մակնիշների ալմաստներ, որոնց համար տարեկան ծախսվում էին մոտ 80 տոննա վիմատիպ քարեր: Նույն այդ տարիներին Արագած ավանի արհեստական ալմաստների գործարանը տարեկան արտադրել է 20 մլն կարատ ալմաստ, որոնց համար ծախսել է 25 տոննա վիմատիպ քար:

Հայաստանի արհեստական ալմաստների երկու գործարանները միասին, օգտագործելով Ալգետիի և Նովոռոսիյսկի հանքավայրերի վիմատիպ քարերը, 1987—1988 թթ. տարեկան արտադրել են 75 մլն կարատ տարբեր մակնիշների ալմաստներ և ծախսել են մոտ 105 տ վիմատիպ քարեր:

Հիմք ընդունելով Երևանի «Այմաստ» գործարանի նախկին տնօրեն Կ. Միտոյանի՝ թիվ 05/6285 (29 նոյեմբերի 1976 թ.) նամակում Իջևանի վիմատիպ քարերը օգտագործելու դեպքում արտադրողականության 20 տոկոսի աճի վերաբերյալ բերած տվյալները՝ (քանի որ 20 տոկոսով կրճատվում է անհաջող «թշխվածքների» թիվը), պետք է եզրակացնել, որ 1987—1988 թթ. Հայաստանի գործարանները կարող էին 75 մլն կարատի փոխարեն արտադրել 90 մլն կարատ տարբեր մակնիշների ալմաստներ, առանց տեխնոլոգիայի և տեխնիկայի թեկուզ և ամենաչնչին փոփոխության, տալով 15 մլն կարատի տարեկան աճ: Իսկ եթե հիմք ընդունենք «Այմաստ» գործարանի՝ տեխնոլոգիական փորձարկումների մասին Հայաստանի երկրաբանության վարչությանը հանձնված հաշվետվության մեջ բերված աճի տվյալները (2—5 տոկոս), ապա արտադրողականությունը կարող էր կազմել 1,5-ից մինչև 3,75 մլն կարատ, միջինը՝ ավելի քան 2,6 մլն կարատ:

Այժմ (1996 թ. տվյալներով) Երևանի «Այմաստ» գործարանը, օգտագործելով Ալգետիի ու Նովոռոսիյսկի հանքավայրերի վիմատիպ քարերը, աշխատում է իր նախագծայինից 2 տոկոսից էլ պակաս հզորությամբ և տարեկան արտադրում է 1,2 մլն կարատ տարբեր մակնիշների ալմաստներ, որոնց յուրաքանչյուր կարատը վաճառվում է 4-ից մինչև 50 ցենտով (ԱՄՆ): Վաճառվող արտադրանքի յուրաքանչյուր կարատի միջին արժեքը ընդունելով 10 ցենտ, դժվար չի լինի հաշվել, որ տարվա ամբողջ արտադրանքի համար գործարանը կստանա ընդամենը 120 հազար ԱՄՆ-ի դոլար:

Այսպիսի հզորությամբ աշխատող գործարանը, ունենալով վարչական ու օժանդակ աշխատողների բավականին մեծաթիվ «բանակ», չենք կարծում, թե կարողանա շահույթ ունենալ: Շահույթ ունենալ չի կարող նույնիսկ այն դեպքում, եթե օգտագործվեն Իջևանի վիմատիպ քարերը և ձեռնարկության արտադրողականությունը, առանց տեխնոլոգիական ու տեխնիկական փոփոխության, աճի 20 տոկոսով:

Երևանի «Այմաստ» գործարանի ղեկավարության հաղորդման համաձայն ձեռնարկության արտադրողականությանն այսչափ մեծ (ավելի քան 45 անգամ) անկման պատճառները բազմաթիվ են, որոնցից ամենակարևորը այն է, որ գործարանի սարքավորումները, գրեթե ամբողջովին հնացել, մաշվել ու շարքից դուրս են եկել:

Հայաստանի երկու գործարանները, որոնց արտադրանքը վաճառվում է ինչպես ՍՊՀ (Ռուսաստանի Դաշնություն) երկրներում, այնպես էլ արտասահմանյան նույնիսկ զարգացած երկրներում, այսօր լիովին քայքայման եզրին են և այսպես շարունակվելու դեպքում շատ շուտով կդադարեն գոյություն ունենալ: Գործարաններն անհապաղ օգնության կարիք ունեն: Դժբախտություն կլինի, եթե դրանք կործանվեն: Սա մեղմ ասած: Իսկ եթե իրերը կոչենք իրենց իսկական անունով, հանցագործություն կլինի, եթե թույլ տանք, որ դրանք փլուզվեն:

Անհրաժեշտ է գործարանները սարքավորել նորագույն տեխնիկական միջոցներով, և հատկապես ժամանակակից մամլիչներով: Այս դեպքում, օգտագործելով նաև Հայաստանի վիմատիպ քարերը, աստիճանաբար մեծացնելով արտադրական կարողությունները, կարտադրվի 120 մլն կարատ ալմաստ: Դա նշանակում է, որ գործարանները տարեկան կարող են ստանալ ավելի քան 12 մլն ԱՄՆ-ի դոլար և աշխատել մեծ շահութաբերությամբ:

Այս առաջարկությունները՝ ինչպես գործարանները առաջավոր երկրների սարքավորումներով հագեցնելու, այնպես էլ Իջևանի հանքավայրից վիմատիպ քարերը արդյունահանելու մասին, անհնար է իրագործել առանց Հայաստանի կառավարության հովանավորության ու օգնության: Օգնություն, եթե անգամ ոչ տարադրամով՝ անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու համար, ապա, գոնե՝ արտասահմանյան գործարարներ (հովանավորներ) ու բարեգործներ ճարելով:

Հենց այս հանգամանքներն են, որ մեզ պարտադրում են դիմել Հայաստանի կառավարությանը՝ կործանումից փրկել մեր երկրի համար կենսական արժեք ներկայացնող արհեստական ալմաստների երկու գործարանները:

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ

«ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ»
Գործ՝ նախնադարյան անհայտ քանդակագործի

Մի քաշքշուկի պատմություն

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

05.96. Մեկ-երկու իրադեպ տեղի տեսակցության ընթացքում Պարույր Զաքարյանը հայտարարում է, որ հավաքածուի ուսումնասիրման և արժեքավորման գործը պետք է հետաձգել անորոշ ժամանակով՝ կապված Օհրակի մարզպետարանի դիրքորոշման հետ:

06.96. Մարզպետարանի ընդհանուր բաժնի վարիչ պր-ն Մատուլյանի մոտ գրանցվում է իմ գրությունը ընդունելության խնդրանքով:

Օուրջ երկու ամիս մարզպետարան գնալ-գալով և այդպես էլ ընդունելության պատվին չարժանանալով, ես ըստիպված էի մարզպետի ընդունարանում հայտարարել, որ քաշքշուկը ինձ համար խորապես վիրավորական է, մանավանդ, որ դա անձնական հարց չէ, և ես այսուհետև չեմ անհանգստացնի իրենց:

Այսպես անարդյունք փակվեց իմ գրավոր բանակցությունների առաջին փուլը:

1996 թվականի նոյեմբեր ամսին Գյումրիում հյուրընկալվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Սարգսյանը: Գյումրիի մանկավարժական ինստիտուտում նրա հետ ունեցած հանդիպումը չափազանց վստահեցնող էր ու հուսադրող հանրապետության զարգացման և ապագայի տեսանկյունով: Ոգևորված որոշեցի ինձ մտահոգող հարցով դիմել վարչապետին:

24.12.96. Հանրապետության վարչապետ Արմեն Սարգսյանին հասցեագրված նամակը ընթերցողին ծանոթ թեմատիկայով ավարտվում էր հետևյալ արտահայտությամբ. «Այդ կապակցությամբ, խընդրում եմ Ձեզ, հանձնարարել համապատասխան կազմակերպություններին՝ ծանոթանալ նյութերի հետ, արժեքավորել այն և կազմակերպչական ուղիներ մատնանշել նյութերի մշակումը արագացնելու և մշտավորականների գործունեությանը ծառայեցնելու առումով»:

21.01.97. Թիվ 09—148 գրությամբ հանրապետության վարչապետը իմ նամակի պատասխանը հասցեագրում է երկու կազմակերպության՝ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն և Օհրակի մարզպետարան:

04.02.97. Թիվ 02—22/97 գրությամբ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարի առաջին տեղակալ Ս. Գրիգորյանը ինձ հասցեագրված նամակում մասնավորապես գրում է. «Ի պատասխան Ձեր 24.12.96 նամակի, տեղեկացնում ենք, որ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունը և Հայաստանի պատմության պետական թանգարանի համապատասխան մասնագետները գտնում են, որ Ձեր հավաքածուն պարունակում է գիտության տարբեր բնագավառներին վերաբերող ինֆորմացիոն և մասնագիտական հարուստ նյութեր, որոնք պատմագիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Նպատակահարմար ենք գտնում, պահպանելով Ձեր հավաքածուի ամբողջականությունը, այն հանձնել Գյումրի քաղաքի թանգարաններից մեկին կամ ՀՀ կենտրոնական արխիվի Գյումրիի մասնաճյուղին՝ անբաժանելի անձնական ֆոնդի կարգավիճակով: Ս. Գրիգորյան»:

Այս պատասխանը թերևս ինչ-որ իմաստով կոնկրետ ուղիներ է հուշում նյութերի ճակատագիրը տնօրինելու առումով, սակայն միաժամանակ տալիս է դրանց արխիվային նյութերի կարգավիճակ և հետևաբար սահմանափակում (կամ բացառում) նյութերի լայն օգտագործման հնարավորությունը: Բացի այդ, նամակից ամենևին չի բխում պետական աջակցության պարտավորության նման մի բան՝ թեկուզ այն հարցում, որ նյութերի մի մասը կիսաֆաբրիկատ են և մշակման կարիք ունեն:

ՀՀ վարչապետի նամակին Օհրակի մարզպետարանում ընթացք տալուց հետո, այն հայտնվում է Օհրակի լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի վարիչ, «Հյուսիսային Հայաստան» շաբաթաթերթի խմբագրի ժամանակավոր պաշտոնակատար Հասմիկ Մելքոնյանի մոտ, որի պատասխանում, մասնավորապես, ասված է.

12.08.97. Թիվ 4—249. «Լրատվության, հասարակության հետ կապերի բաժինը չունենալով նման աշխատանքային պարտականություն կամ իրավունք, գտնում է, որ պրոֆեսոր Ս. Բադալյանի նյութերի հավաքածուի մշակումը և այն նպատակին ծառայեցնելու գործը կարող է իրականացնել Գյումրի քաղաքի մշակույթի բաժինը, որի տնօրինությամբ գործող կենտրոնական գրադարանն ունի նման ծառայություն և մասնագետներ:

Այս պատասխանով փակվում է նամակի հետագա ճամփորդությունը մարզպետարանում, քանի որ նրա վրա հայտնվում է վերադասի մակագրությունը՝ «Կցել գործին»:

Ես խորը զարմանք ապրեցի մասնավորապես այս պատասխանից, որովհետև առավել մեծ սպասելիքներ և գործնական վերաբերմունք հենց մարզպետարանից էի սպասում: Իսկ մարզպետարանը, մշակույթի բաժնի վարիչ Հասմիկ Կիրակոսյանի շուրթերով ինձ հաղորդեց. «Գրադարանի շենքի հարցը լուծելուց հետո մենք ձեզ իրազեկ կպահենք»:

Թվում է, թե այստեղ պետք է վեջակետ դնել, որովհետև սույն անտարբերությունն ու նորօրյա մարտնչող բյուրոկրատիզմը հոգնեցնում և հուսահատեցնում են: Այո, ես կոնկրետ առաջարկներ ունեի Գյումրի քաղաքի մշակույթի բաժինը, որի տնօրինությամբ գործող կենտրոնական գրադարանն ունի նման ծառայություն և մասնագետներ:

Այս պատասխանով փակվում է նամակի հետագա ճամփորդությունը մարզպետարանում, քանի որ նրա վրա հայտնվում է վերադասի մակագրությունը՝ «Կցել գործին»:

Ես խորը զարմանք ապրեցի մասնավորապես այս պատասխանից, որովհետև առավել մեծ սպասելիքներ և գործնական վերաբերմունք հենց մարզպետարանից էի սպասում: Իսկ մարզպետարանը, մշակույթի բաժնի վարիչ Հասմիկ Կիրակոսյանի շուրթերով ինձ հաղորդեց. «Գրադարանի շենքի հարցը լուծելուց հետո մենք ձեզ իրազեկ կպահենք»:

Թվում է, թե այստեղ պետք է վեջակետ դնել, որովհետև սույն անտարբերությունն ու նորօրյա մարտնչող բյուրոկրատիզմը հոգնեցնում և հուսահատեցնում են: Այո, ես կոնկրետ առաջարկներ ունեի այս հարցի լուծման հողողությամբ, սակայն պաշտոնյա այրերն ու տիկնայք լսելու ցանկություն չունեն: Անգամ ընդունելության պատվին իսկ չեն արժանացնում:

Մինչդեռ իմ խորին համոզմամբ, այդ հավաքածուի «ճակատագիրը» կարող է լուծվել՝ Գյումրի քաղաքում կազմակերպելով ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական կենտրոնի մասնաճյուղ և այնտեղ կենտրոնացնել նման մասնավոր բոլոր հավաքածուները (անուշադրության մատնվելու դեպքում կարող են վերածվել մակուլատուրայի): Եվ այդ գիտամշակութային, ինֆորմացիոն օջախ-գրադարան բազան կարող է տնօրինել առաջիկայում կազմակերպվելիք (որի մասին արդեն մի քանի տարի խոսվում է) ՀՀ ԳԱԱ Գյումրիի գիտական կենտրոնը: Սպասենք և հուսանք:

Ստեփան ԲԱԴԱԼՅԱՆ
Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գ. Գյումրի

ԽԱՉՄԵՐՈՒԿ

Երեք պատահի, որ Երևանից գյուղ էին մեկնում, ուրախ տրամադրությամբ նստեցին միջքաղաքային երթուղու ավտոբուսը: Ընդամենը մեկ ժամ հետո նրանք կշնչեին հայրենի օդը և կհանդիպեին հարազատներին: Ուսանող էին...

Մեքենան դեռ չէր շարժվել, երբ վարորդը դիմապակուց պոկեց «Ուղեվարձը 300 դրամ» հայտարարությունը և տեղը փակցրեց նորը՝ «Ուղեվարձը 400 դրամ»: Հենց այդպես, միանգամից, մեկ վայրկյանում ուղեվարձը թանկացավ 100 դրամով: Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով:

Ծուկայում չի թանկացել վառելիքը, չի բարձրացել ընպասարկման որակը, չի փոխվել մեքենան (նույնը՝ կեղտոտ, փնթի, գիշերը խոտ փոխադրող, ցերեկը՝ մարդ, նույն «կոշտը» ու մրոտ վարագույրներովը): Ուրեմն, ինչը փոխվեց:

Բնակչության լուռ համաձայնությունը, «այսպես էլ մնա՝ գոհ ենք» հայկական «ազգային փիլիսոփայությունը»՝ իրենց ավերիչ գործն են անում. էլեկտրավարձի, կոմունալ այլ ծախսերի, ջրի, հեռախոսի, փոխադրականի վարձերի անզուսպ բարձրացումները, ամենաանհրաժեշտ մթերքների թանկացումները, որոնց դիմաց պետությունը ոչ մի փոխհատուցում չի տալիս կամ համարյա չի տալիս, սոցիալական պայթուցավտանգ իրավիճակ են ընտեղծել ու աղքատության եզրին են հասցնում բնակչության նորանոր զանգվածներ: Կգտնվի՞ մի խելոք, նաև բարի, ազգի ու երկրի ճակատագրով ապրող մարդ, որն ասի.

— Կանգնե՛ք, պարոննե՛ր, նահանջելու էլ տեղ չունենք, ևս մի քայլ ու լինել-չլինելու հարցը կլուծեք հոգուտ երկրորդի:

Ընթերցողը կասի՝ իսկ ի՞նչ եղան պատանիները, ովքեր տուն էին մեկնում:

— Վա՛յ ձեր...,— ու էլի ինչ որ անհասկանալի բառեր ասացին ու իջան մեքենայից, շվարած կանգնեցին Ծահումյանի խաչմերուկի մայթին: Իսկ այդ մայթին շվարած մարդկանց մեծ բազմություն կար:

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԷՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՅԱԿԵՐՊ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյունները, նշանավորեցին ընտտեցման շրջանակների ընդլայնումը՝ նրանում գիտական գիտելիքի զարգացման վրա մշակութային գործոնների դերը ու նշանակությունը պարզելու համար: Գիտելիքի տրամաբանական-վերլուծական քննությանը հակակշռող և միաժամանակ լրացնող պատմամշակութային այս մոտեցումը հնարավորություն է տալիս նորովի ներկայացնել գիտական գիտելիքի իմացաբանական բնութագրերը, առանձնապես նրա օբյեկտիվությունն ու «գիտական ռացիոնալությունը», իմաստավորվում է գիտական ճանաչողության փիլիսոփայական-աշխարհայացքային կանխադրույթների պատմական-հարաբերակցական բնույթը, հումանիստիկայի և արվեստի հետ գիտության առընչությունները:

Հայաստանում գիտական գիտելիքների նման իմաստասիրական վերլուծության փորձն իր արմատներով ու ակունքներով գնում է դեպի 50—60-ական թվականների փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի հետազոտական այն խմբերը, որոնք գլխավորել է Համլետ Գևորգյանը և որոնք մեր սերնդակից իմաստասերների կողմից գորովանքով «համլետանոց» էին կոչվում: Հայ իմաստասերների մի զգալի մասը կա՛մ ուղղակի այդ խմբերից է դուրս եկել՝ կա՛մ հիմա էլ այնտեղ է և վայելում է ստեղծագործական արարումի խրախճանքը: Մեր դժվարին օրերում գիտությունների ազգային ակադեմիայում աշխատելը անհնար կլիներ առանց խորապես գիտակցված նվիրումի ու ասկետական կենցաղի պատրաստականության, առանց սեփական առաքելության գիտակցման ու առ գիտությունը տածած ասպետական հավատարմության: Առանց այդ որակների անհնար կլիներ գիտական ծրագրերի այն վեռակազմությունը, որ իրագործեց հայ իմաստասերների մի խումբ՝ մշակութաբանության ու պատմության մեթոդաբանության դիրքերից պաշտպանելով դարաբաղյան դատը, ամրացնելով ազգային գաղափարախոսության այդ ճակատի մոտակա ու հեռավոր մատույցները: Ազգային հրամայականի պատասխանները դարձան Համլետ Գևորգյանի «Ազգային մշակույթը պատմության փիլիսոփայության տեսանկյունից» (1992 թ.) և «Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ. հայկական հարցը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի տակ» (1997 թ.) մենագրությունները, որոնք անկասկած ներդրում են հայ մշակութաբանական և քաղաքագիտական մտքի պատմության մեջ:

Հորելյանի կապակցությամբ գրված նման հոդվածի ժանրը մեզ պարտավորեցնում է հիշատակել նաև որոշ կենսագրական տվյալներ: Բայց անձնական թերթիկի այն տեղեկությունները, թե 1927 թ. հուլիսի 10-ին Երևան քաղաքում ծնված Համլետ Ամբակումի Գևորգյանը 50-ին ավարտել է Երևանի պետհամալսարանի միջազգային հարաբերությունների պատմության ֆակուլտետը, 55-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1970-ին՝ դոկտորական ատենախոսությունները և 1962-ից մինչ օրս՝ խմբի ղեկավար ու բաժնի վարիչ՝ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում, որ նա սահմանադրական հանձնաժողովի անդամ է եղել, և այլն, և այլն, իմաստասերի տեսակետից իրոք, միայն անկետային տվյալներ են:

Ժամանակներ հետո, երբ հայ իմաստասիրության պատմության մասնագետները փորձեն պարզել, թե ո՞ր գիտնականների հոգևոր ջանքերով է ուղղորդվել հայ իմաստասիրական միտքը 21-րդ դարում, ապա առաջինների թվում կհնչեցվի այսօրվա մեր հորելյարի անունը:

Ալեքսանդր ՄԱՆԱՍՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՐԴՈՐԱԿ

Հուլիսի 25-ին Երևանում տեղի ունեցավ բնակչության հերթական հանդիպում, որտեղ հրապարակվեց ՀՀ վարչապետին ուղղված մի հորդորակ, որտեղ մասնավորապես ասված է.

Ռազմաքաղաքական այս պայմաններում նույնքան անհանդուրժելի է նաև **առանց նպաստների, թոշակների ու աշխատավարձի համապատասխան հավելումի** արվող ցանկացած թանկացում, քանի որ նպաստներն ու աշխատավարձը չեն հերիքում բնակչության մեծ մասի հանապազօրյա հացին նույնիսկ: Ընկերային ծանր դրության մեջ գտնվող բնակչությանը նոր թանկացումներով ու այլ գործողություններով ընկճելը, կարիքավորներին զանազան արտոնություններից զրկելը, հեռախոսի, հացի, բնակվարձի, կոմունալ հարկերի բարձրացումը և այլն ևս անթույլատրելի է, որովհետև ջլատում է ժողովրդի դիմադրական ոգին, խարխլում է նրա միասնությունը, սասանում է պետականության հիմքերը, գործունեության դաշտ բացում Հայաստանը սրան-նրան կցելու ծորտամիտ քարոզչության համար:

Ելնելով վերոհիշյալից, հորդորում ենք.

1. Չեղյալ հայտարարել կարիքավորներին փոխադրականով երթևեկելու և այլ արտոնություններից զրկելու որոշումը, 20 տոկոսով իջեցնել վարորդների վրա դրված պետական տուրքերն ու հարկերը:

2. Իջեցնել հեռախոսի, լույսի, բնակարանի և կոմունալ ծառայությունների վարձերը: Առանց համապատասխան փոխհատուցման բացառել որևէ թանկացում:

3. Անապահով, թոշակառու և նվազագույն եկամուտ ունեցող բոլոր անձանց տալ բուժհիմնարկների ծառայություններից ձրիաբար օգտվելու իրավունք:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բաժանագրությունը

Արշակունիները Վրաստանում

Փարնաոզի մահվանից հետո, առաջնության իրավունքով Վրաստանի թագավոր եղավ նրա որդի Սաուրքաքը, որի իրավունքը պահպանվել էր Վրաստանում: Դժգոհ Սաուրքաքից, վրացիները ցանկանում էին գահընկեց անել նրան և վերականգնել Մամասախլիսների (Տնատերերի) իշխանությունը: Սաուրքաքը նկատելով ժողովրդի այդ հուզումները, փախավ Կովկասյան լեռները, այնտեղից զորք բերեց և ճնշեց վրացիների հուզումները: Ցազոնի կողմնակիցներին ներում շնորհեց՝ իրեն հավատարմության համար և նրանց ազնվականի կոչումներ տվեց, որոնք մինչև օրս այդպես էլ կոչվում են՝ ազնատուր, որը ծագել է Ցազոն անունից, և նրանցից պատրաստեց իր անձի պահապաններ: Դրանից հետո նա իր համար կառուցեց և ամրացրեց երկու տարածք, բնակեցրեց դրանք վրացիներով այն շրջաններից, որոնք չէին մասնակցել հուզումներին: Այդ տարածքները հուսալիորեն պաշտպանված էին հնարավոր նոր հուզումներից: Այդ տարածքներից առաջինը կոչվում է Դիդո, երկրորդը՝ Ավանեթիա:

...Չունենալով սերունդներ, թագավորը գահակալ նշանակեց իր փեսային՝ Միրվանին, ասորական Նիմվրոդ թագավորի տոհմից: Դառնալով թագավոր, Միրվանը դաժանորեն պատժեց կովկասցիներին՝ վերջիններիս հանդգնության և հարձակումների համար: Միրվանից հետո գահավորեց նրա որդի Փարնաջոմը, որն արգելեց ժողովրդին կուռքեր պաշտել և ունենալով հակում պարսկական ծեսերի նկատմամբ, մտցրեց զրադաշտությունը: Վրացիները, զայրանալով իրենց հին ծեսերի նկատմամբ այդ արհամարհանքից, հայրենիքից վռնդեցին նրան և խնդրեցին Հայոց թագավոր Արտաշեսին, ինչպես նշում են վրաց աղբյուրները, թույլ տա իր որդուն՝ Արշակին, որը վրաց թագավոր Միրվանի փեսան էր, գահակալել Վրաստանում:

Պր. 17

Արշակը Վրաստանի թագավորների մեջ այդ անունով առաջինն էր, այսինքն Արշակունիների առաջինը: Այս թագավորի օրոք Վրաստանում փոքր իրարանցում տեղի ունեցավ, քանի որ ժողովուրդը՝ ահաբեկված Մեծն Պոմպեոսի Կովխիդա գալուց, թաքնվում է Կովկասյան լեռներում: Բայց դա երկար չտևեց: Նշված հրամանատարի մեկնումը վերականգնեց տարածքի անվտանգությունն ու խաղաղությունը: Իսկ Փարնաոզների տոհմի վերջին գահակալ Փարնաջոմը Վրաստանից վտարվելուց հետո, թաքնվեց Պարսկաստանում: Որոշ ժամանակ անց, նա բանակով եկավ Վրաստան, կռվի բռնվեց Արշակի հետ և ճակատամարտում ջարդվեց ու սպանվեց վրացիների կողմից և նրա մահվանով ավարտվեց Փարնաոզների ընտանիքի թագավորական տոհմը:

Պր. 18

Արշակի մահվանից հետո Վրաստանում գահակալեց նրա որդի Արստակը, որից հետո՝ Բարտոմը, որը զոհվեց պարսիկների դեմ ճակատամարտում: Դրանից հետո թագավորեց Միրվանը, որից հետո գահակալեց նրա որդին՝ Արշակ երկրորդը: Նշված երկու թագավորներն էլ Փարնաոզյանների տոհմից էին: Վերջինս, այսինքն՝ Արշակ երկրորդը, սպանվեց Բարտոմ թագավորի որդի Աղերկի կողմից, որը դաստիարակվել էր Հայաստանում: Արշակի մահվանից հետո Վրաստանում թագավորեց Աղերկը: Եվ ճիշտ նրա գահակալության ժամանակ ծնվեց Քրիստոսը:

(Հատված «Վրաստանի համառոտ պատմությունը» գրքից: Տեղեկանքի համար հեռաձայնել՝ 22-44-26):

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 բ, հեռախոս՝ 22-44-26:

«Պարբերական» հրատարակչության տպարան: Դասիչ՝ 69236, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 31.07.1997 թ. (1515—1539):

Թերթի հովանավորն է «ԿԱՆԱՉ» ՓԲԸ

«ГИТУТЮН»—
(«Наука»)
Газета Национальной
Академии наук РА